



ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

«ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ

Հայաստանի պետական շրջանակները եւ նոյնիսկ պաշտօնական վիճակագրական տուեալներ չաճախ կ'արտայայտուին երկրէն ներս տարուէ-տարի արձանագրուող տնտեսական աճի ու անգործութեան ցուցանիշերու բարելաւման մասին:

Վերջերս հրապարակուեցաւ Եւրոպայի Ապահովութեան եւ Համագործակցութեան Կազմակերպութեան (ԵԱՀԿ) Երեւանեան գրասենեակի կատարած բաւական ծաւալուն մէկ ուսումնասիրութիւնը, որ կու գայ կասկածի տակ առնելու ցարդ Հայաստանի մէջ անգործութեան վերաբերեալ պետական վիճակագրական գրեթէ բոլոր տուեալները:

2005 թուականի փետրուար ամսուայ դրութեամբ, Հայաստանի բնակչութեան աշխատանքային տարիք ունեցող երեք անձերէն մէկը անգործ է: Ուսումնասիրութիւնը այս եզրակացութեան հանգած է, երկրի ամբողջ տարածքին կատարուած հարցախոյզի արդիւնքներու հիման վրայ:

Պաշտօնական տուեալները Հայաստանի մէջ անգործներու թիւը կը ներկայացնեն 10 տոկոսի սահմաններու մէջ: Իսկ ահա, եւրոպական այս հեղինակաւոր կազմակերպութեան համար կատարուած վստահելի ուսումնասիրութիւնը կու գայ այդ ցուցանիշը բարձրացնելու խիստ մտահոգիչ 33 տոկոսի:

Ռոբերտ Քոչարեանի իշխանութեան տարիներու յատկանշական մէկ երեւոյթը դարձած է տնտեսական աճի մասին յայտարարուող թիւերը: Անցեալ տարուայ համար այդ զարգացումը գնահատուեցաւ 14 տոկոս: Իսկ, Քոչարեան ինք անձնապէս յայտարարեց թէ անգործութիւնը մէկ տարուայ մէջ նուազած է 18 տոկոսով:

Միջազգային կազմակերպութիւններու ներկայացուցած թիւերուն եւ պաշտօնական տուեալներուն միջեւ գոյութիւն ունեցող այս հսկայ տարբերութիւնը կ'առաջնորդէ մեզ եզրակացնելու, թէ պաշտօնական տուեալները չեն համապատասխանէր ճշմարտութեան ու հրապարակ կը նետուին քաղաքական շահագործումի համար: Այլապէս, տարիներէ ի վեր թմբկահարուող տնտեսական աճի պայմաններուն տակ, ժողովուրդը պէտք է սկսած ըլլար քաղել անոր պտուղները, բան մը որ տակաւին կը պակսի Հայաստանի բնակչութեան մեծամասնութեան համար: Անոնք տակաւին ստիպուած են ապաւինելու «արտասահմանի իրենց ազգականներու ուղարկած գումարներուն», ինչպէս ցոյց տուած է ԵԱՀԿ-ի ուսումնասիրութիւնը:

Ս.Դ.Հ.Կ. Մամոյ Դիւան

ՔՈՉԱՐԵԱՆ-ԱԼԻԵՒ ԸՆԴԴՈՒՄԸ ԱՒԱՐՏԵՑԱՒ ԱՌԱՆՑ ԸՆԿՆԱԶՆՆՈՒԹԵԱՆ

Լեռնային Ղարաբաղի տագնապի խաղաղ միջոցներով լուծման ձգտող բանակցութիւնները, որոնք տեղի ունեցան փետրուար 10-11-ին Փարիզի մէջ, Ռոբերտ Քոչարեանի եւ Հէյտար Ալիևի միջեւ աւարտեցան առանց դրական արդիւնքի:

Կողմերը համաձայնութիւն ձեռք ձգած են միայն այն մասին, որ բանակցութիւնները պիտի շարունակուին Մարտին՝ Ուաշինկթընի մէջ: Հոն հանդիպում տեղի կ'ունենայ Հայաստանի եւ Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարներու եւ ԵԱՀԿ Մինսկի խումբի անդամներու մասնակցութեամբ:

Հայաստանի եւ Ատրպէյճանի իշխանաւորներու բանակցութիւններու մասին թէեւ պաշտօնական տեղեկութիւն չհրապարակուեցաւ, սակայն, ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահներու տարածած յայտարարութեան մէջ ըսուած է. «Հակառակ ակտիւ բանակցութիւններուն, կողմերու դիրքորոշումը՝ որոշ հարցերու առումով մնացած է անփոփոխ: Այսուհանդերձ, նախագահները բարձր գնահատած են բանակցութիւններու ընթացքը եւ արտաքին գործոց նախարարներուն ցուցմունքներ տուած են ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահներու հետ մշակել

նոր ուղիներ հակամարտութիւնը կարգաւորելու համար»:

«Մենք պէտք է տեսնենք, թէ որ ուղղութեամբ պէտք է շարժին այստեղէն», - յայտարարեց Մաննը՝ աւելացնելով. - Մինսկի խումբի Ամերիկացի համանախագահ Սթիւըն Մանն յայտնեց «Ազատութիւն» ռատիոկայանին, աւելցնելով. - «Արդիւնքներ չկան, համաձայնութիւն ձեռք չբերուեցաւ»:

Բանակցութիւններուն մօտ եղող աղբիւր մը նոյն ռատիոկայանին յայտնած է որ, բանակցող կողմերը Քելբաջարի եւ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի՝ շատ դժուար հարցերուն առջեւ յայտնուելով, չկարողացան առաջ շարժիլ:

Ենթադրութիւններ կան, որ հայկական կողմը գրաւեալ տարածքներէն զօրքերու դուրս բերելու ժամանակացոյցը կ'ուզէ կապել հանրաքուէի ժամկէտի հետ եւ այդ տրամաբանութեամբ կ'առաջարկէ Քելբաջարը յանձնել ամենավերջը՝ երբ ատրպէյճանցիները համաձայն կը գտնուին հանրաքուէ կայացնել Լեռնային Ղարաբաղի մէջ: Սակայն ատրպէյճանցիները դէմ էին եւ կարելի չէր փոխել կողմերու դիրքորոշումները:

Շաբ.ը էջ 4

«ՈՐԵՒԵ ԵՐԿԻՐ ՉԻ ԿՐՆԱՐ ՄԻՋԱՄՏԵԼ ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ».- Կ'ԸՍԵ ԻՐԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԸ



Իրանի եւ Հայաստանի արտաքին գործոց նախարարները՝ Մանուչեհր Մոթաֆի (ձախիմ) եւ Վարդան Օսկանեան Երեւանի մէջ տեղի ունեցած մամոյաւաւ լիսի ընթացքին

Փետրուար 14-ին Երեւանի մէջ կայացած մամուլի ասուլիս ընթացքին Իրանի արտաքին գործոց նախարար Մանուչեհր Մոթաֆիի յայտարարեց, որ գազամուղը երկու երկիրներու ներքին հարցն է եւ որեւէ երրորդ երկիր

միջամտելու իրաւունք չունի Հայ-իրանական յարաբերութիւններուն: Հայաստան կատարած իր առաջին այցի առթիւ Վարդան Օսկանեան գնահատելով Իրանցի իր գործը:

Շաբ.ը էջ 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵԼՍԻՆՔԵԱՆ ԿՈՄԻՏԵՆ ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԷ. «ԱՄԵՐԻԿԱՅԱՅ ԾԵՐԱՐՏ ԳԱՖԵՍՏԵԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ԾԱՌԱՅՈՒՄ ԵՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՔԱՐՈՉՉՈՒԹԵԱՆ»

Հայաստանի Հելսինքեան կոմիտէն հանդէս եկած է յայտարարութեամբ մը, ուր իր վրդովմունքը կ'արտայայտէ ապատեղեկատուութեան տարածման միջոցով Կոմիտէի գործունէութիւնը արատաւորելու հայկական երեք հեռուստաընկերութիւններու կողմէ կատարուող փորձերի կապակցութեամբ:

Յայտարարութեան մէջ ըսուած է. «2006թ. փետրուարի 4-6-ը, երեք օր շարունակ, իշխանութեան վերահսկողութեան տակ գործող «Արմենիա», «TV5» եւ «Արմինիա» հեռուստաընկերութիւնները եթեր հեռարձակեցին Հայաստանի Հելսինքեան կոմիտէի գործունէութիւնը վարկաբեկելուն միտուած մի հարցադրում, որտեղ փորձ էր արուած ԵԱՀԿ-ից ստացած դրամաշնորհով մեր իրականացրած գործունէութիւնը ներկայացնել որպէս լրտեսութիւն»:

Շարունակելով իրաւապաշտպան կազմակերպութեան յայտարարութիւնը կ'ըսէ. - «Այս «ռեպորտաժը» պատասխանն էր վերջերս մեր ստորագրած մի յայտարարութեան, որով Հելսինքեան կոմիտէն ցոյց էր տալիս, որ երկիրը շեղուած է մարդու իրաւունքների սկզբունքներից»:

«Հայաստանի իշխանութիւնները, չկարողանալով իրենց կատարած անօրինականութիւններն արդարացնող որեւէ փաստարկ բերել, սկսում են օգտուել ովտեսական պրոպագանդայի գինանոցից եւ ցանկանում են երկրում իշխող ապօրինութիւնները թաքցնել՝ մարդկանց ուշադրութիւնը շեղելով իրենց իսկ ստեղծած «արտաքին թշնամու» կողմը, որն այս դէպքում այն կառուցներն են, որոնց անդամագրուած է Հայաստանը (Եւրոպայի խորհուրդ, ԵԱՀԿ)»:

«Ցաւալի է, որ «Արմենիա», «Արմինիա» եւ «TV5»-ի համասեփականատէր, ամերիկահայ ճերարտ Գաֆէսճեանի ներդրումները ծառայում են իշխանութեան քարոզչութեանը, ապատեղեկատուութիւն տարածելուն եւ սովետական հակալրագրութեան վերածննդին: Քանի որ այդ հեռուստատեսութիւնները գտնուում են իշխանութեան վերահսկողութեան տակ, ապա հնարաւոր չէ իրենց իսկ եթերով պատասխանել նրանց»:

Հելսինքեան Կոմիտէի ասպանգ կը հնչեցնէ, որ երկրէն ներս սկսած է վերականգնուել այլախոհներու դէմ պայքարի «սովետական մեթոտները եւ վտանգուած է իրաւապաշտպանութիւնը»:

ԱԶԳԱՅԻՆ

ԼՂ ՇԱՐՑՈՎ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԲԱՐՂ Է

Իրադարձութիւնները ԼՂ համարտութեան կարգաւորման խաղաղ բանակցութիւնների ճակատում շարունակում են զարգանալ «արջամկան օրուայ» ոգով:

Յամենայնդէպս ԵԱՀԿ ՄԽ համանախագահները, Ռամբոյէում փետրուարի 10-11-ին կայացած բանակցութիւններից յետոյ կիրակի առաւօտեան արթնանալով, բոլոր հիմքերն ունէին իրենց զգալու յայտնի ֆիլմի հերոսի նման, որի կեանքում օրեր շարունակ ոչինչ չի փոխուում, իւրաքանչիւր առաւօտ արթնանալով՝ նա իր օրը սկսում է նոյն կէտից: ԵԱՀԿ ՄԽ համանախագահները յայտնուել են այդ հերոսի վիճակում, քանի որ նրանք միջնորդութեամբ ընթացող ԼՂ հակամարտութեան կարգաւորման բազմամեայ բանակցութիւններում տարիներ շարունակ ոչինչ չի փոխուում, եւ իւրաքանչիւր «բեկումնային», «ձեղքում» խոստացող բանակցութիւնից յետոյ նրանք ամէն ինչ սկսում են նոյն կէտից:

Փետրուարի 10-11-ին Ռոբերդ Քոչարեանի եւ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի՝ Ռամբոյէում կայացած բանակցութիւններից հրապարակութիւնը կատարեալ է: Հրապարակում են բոլորը՝ ԵԱՀԿ ՄԽ համանախագահները, միջազգային փորձագէտները, դիւանագիտական «անանու» աղբիւրները, ենթադրում է նաեւ՝ ԱՄՆ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսը, որ հանդիպումից առաջ զանգահարել էր Ռոբերդ Քոչարեանին եւ Իլհամ Ալիեւին՝ ընդգծելու, թէ որքան կարեւոր նշանակութիւն ունի ԼՂ հակամարտութեան կարգաւորումը: Կատարեալ հրապարակութիւն է տիրում նաեւ Քոչարեան-Ալիեւ հանդիպման վերաբերեալ ինֆորմացիոն հոսքում:

«Ռամբոյէի պալատում ԼՂ երկու օր տեւած բանակցութիւններից յետոյ Հայաստանի նախագահ Ռոբերդ Քոչարեանին ու Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւին չյաջողուեց համաձայնութեան գալ՝ Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեանը վերջ դնելու շուրջ», «Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահները չկարողացան ԼՂ հակամարտութեան կարգաւորման համաձայնագիր կնքել Փարիզում կայացած իրենց հանդիպման ժամանակ, որը համարում էր համաձայնութեան գալու վերջին տարիների ամենալաւ հնարաւորութիւնը», «Քոչարեան-Ալիեւ բա-

նակցութիւնները տապալուել են», աչապէս են սկսում համաշխարհային ամենահեղինակաւոր գործակալութիւնների եւ թերթերի տարածած տեղեկատուութիւնները Ռամբոյէի բանակցութիւնների մասին:

Մինչդեռ մինչեւ Ռամբոյէում բանակցութիւնները սկսուելը նոյն համաշխարհային լրատուական հոսքին ծանօթանալով՝ կարելի էր ուղղակի վստահ լինել, որ Ռամբոյէում Քոչարեանն ու Ալիեւը իրադրութեան համաձայնագիր են կնքելու կամ առնուազն նախնական համաձայնութեան են գալու հակամարտութեան կարգաւորման սկզբունքների շուրջ: Բնականաբար, աշխարհի առաջատար ինֆորմացիոն կենտրոնները նման բաներ «օղից» չեն տարածում, նրանք հիմնուում են մի շարք լուրջ աղբիւրների վրայ: Ռամբոյէի բանակցութիւններին նախորդող լատենսական միջնորդի ստեղծման գործում մեծ դեր ունէին «անանու» աղբիւրները: Վերջիններս չեն լուրջ նաեւ բանակցութիւններից յետոյ: «Յոյսեր կային, որ կողմերը համաձայնութեան կը գան գրաւեալ տարածքներից հայկական զօրքերի դուրսբերման եւ ԼՂ հետագայ կարգավիճակի որոշման եղանակների շուրջ: Միջնորդները կազմել էին հարցի աչապիսի լուծման համաձայնագրի նախագիծը:

Սակայն բանակցութիւններում ներգրաւուած դիւանագէտները նշում են, որ նախագահները չկարողացան նախագծի շուրջ նոյնիսկ նախնական համաձայնութեան գալ, ինչը նշանակում էր հետագայում ուղղակի ժամանակ վատնել: Հիմնական հարցերը շարունակում են մնալ հետեւեալը՝ Հայաստանը պահանջում է թոյլ տալ, որ ԼՂ հայ բնակչութիւնը հանրաքուէով վճռի իր ձակատագիրը, մինչդեռ Ատրպէյճանը պնդում է, որ ԼՂ-ն մտնում է իր սահմանների մէջ:

Շատերը, որ ներգրաւուած են հակամարտութեան կարգաւորմանն ուղղուած ջանքերում, գտնում են, որ 2006 թուականը լուծման հասնելու վերջին հնարաւորութիւնն է՝ որոշ ժամանակի համար, քանի որ նախ երկու երկրներում էլ ընտրութիւններ չկան, եւ յետոյ՝ միջազգային հանրութիւնը պատրաստ է օգնութիւն տրամադրել խաղաղ գործընթացն աւարտին հասցնելու համար», - գրում է «New York Times»-ը: Իսկ «Ազատութիւն» ու-

կ-ի՝ բանակցութիւններին մօտ կանգնած աղբիւրը Ռամբոյէի հանդիպումը համարել է Քի վեսթից յետոյ եւ ԼՂ բանակցային գործընթացի ողջ պատմութեան ընթացքում հակամարտութիւնը կարգաւորելու ամենալուրջ փորձը եւ ասել, որ ԼՂ կարգավիճակի եւ Քիլբաջարի հարցում կողմերը յայտնուել են շատ դժուարին խնդիրների առջեւ եւ չեն կարողացել առաջ շարժուել:

Միջազգային լրահոսը եւ որոշ դէպքերում նաեւ անանու աղբիւրները հիմնուում են ԵԱՀԿ ՄԽ համանախագահների վրայ կամ ուղղակիօրէն կապուած են նրանց հետ: Իսկ համանախագահները Ռամբոյէի բանակցութիւններից յետոյ յուսախաբ են այնքան, որքան յուսաւատ էին դրանցից առաջ:

«Չնայած ինտենսիվ բանակցութիւններին, որոշ սկզբունքային բարդ հարցերի շուրջ կողմերի դիրքորոշումները շարունակում են իրարից հեռու լինել, ինչպէս վերջին ամիսներին է եղել... Սակայն երկու նախագահները, որ մեծապէս գնահատում են ընթացող բանակցութիւնները, ԱԳ նախարարներին յանձնարարել են հարցի կարգաւորման նոր ուղիներ փնտռել», - ասում է Ռամբոյէի բանակցութիւններից յետոյ ԵԱՀԿ ՄԽ համանախագահների համատեղ յայտարարութեան մէջ: Իսկ ամերիկացի համանախագահ Սթիւըն Մանը, ըստ «Ասոշիէյթեդ Փրէս»-ի, շաբաթ օրը մի քանի ժամ տեւած բանակցութիւններից յետոյ երեւացել է բանակցային սենեակի դռները արանքում ապառուած տեսքով եւ յայտարարել. «Համաձայնութիւն ձեռք չբերուեց»:

Աւելի ուշ Սթիւըն Մանը «Ազատութիւն» ու/կ-ին տուած հարցազրոյցում ասել է. «Ռամբոյէում Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահների միջեւ տեղի ունեցան ինտենսիվ բանակցութիւններ, քննարկուեցին դարաբաղեան հակամարտութեան հարցերի ողջ շրջանակը, երկու նախագահների միջեւ լաւ անձնական միջնորդ էր ստեղծուել, սակայն համաձայնութիւն ձեռք չբերուեց: Քննարկումների արդիւնքում կողմերի դիրքորոշումներում շօշափելի փոփոխութիւն տեղի չունեցաւ: Հիմա համանախագահները պէտք է գնահատեն բանակցութիւնները», - ասել է Սթիւըն Մանը: Վերջինս տեղեկացրել է, որ համանախագահները մեկնելու են Բրիւսել՝ բանակցութիւնների մասին զեկուցելու ԵԱՀԿ գործող նախագահին եւ մտածելու՝ ո՞ր ուղղութեամբ շարժուել այսուհետ:

ԵԱՀԿ ՄԽ համանախագահների յայտարարութեան մէջ նշուում է, որ նրանք մարտին հանդիպելու են Ուաշինգտոնում՝ հետագայ բանակցութիւնների ձեւաչափն ուրուագծելու համար: Կարծում ենք, Ռամբոյէում կրած հարուածից յետոյ համանախագահներին իսկապէս դժուար կը լինի բանակցութիւնները շարունակելու համար նոր բան մտածելը: Իհարկէ, ԱՄՆ համանախագահ Սթիւըն Մանը այդքան «սպառուած» եւ ընկճուած չէր լինի, եթէ իր եւ իր գործընկերների յայտարարութիւնների արդիւնքում Ռամբոյէի հանդիպումը ամբողջ աշխարհում չընկալուէր որպէս ԼՂ հակամարտութեան աւարտի սկիզբ:

Մենք բազմիցս անդրադարձել ենք վերոնշեալ զարգացմանը, եւ այժմ թերեւս չարժէ այդ մասին խօսել: Փոխարէնը նշենք, որ Ռամբոյէի բանակցութիւնների մասին միակ դրական գնահատականը պատկանում է ՀՀ նախագահի խօսնակ Վիկտոր Սողոմոնեանին: «Չնայած, որ Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման շուրջ պայմանաւորուածութիւն չի ձեռք բերուել, հայկական կողմը դրական է գնահատում փետրուարի 10-11-ին Ռամբոյէում Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահների միջեւ բանակցութիւնների շարունակման փաստը», - յայտարարել է Սողոմոնեանը: Վերջինս հրաժարուել է մեկնաբանել ատրպէյճանական լրատուամիջոցների եւ իշխանութիւնների մի քանի յայտարարութիւններ՝ դրանք որակելով «ոչ լուրջ եւ իրականութեանը չհամապատասխանող»:

Մասնաւորապէս Ատրպէյճանի ԱԳ նախարար Էլմար Մամեդեարովը, խօսելով Ռամբոյէի մասին, յայտարարել է, որ ԼՂ կարգավիճակի հարցում Ատրպէյճանը որեւէ գիշման չի գնալու, եւ նշել, որ նախագահներին չի յաջողուել համաձայնութեան գալ ատրպէյճանցի փախստականների, տեղահանուած անձանց վերադարձի եւ Ատրպէյճանի տարածքային ամբողջականութեան հարցում: Իսկ ատրպէյճանական լրատուամիջոցներից մէկը հաղորդել է, որ ՀՀ նախագահ Ռոբերդ Քոչարեանը ընդհատել է բանակցութիւնները եւ վերադարձել Երեւան:

Ինչեւէ, ակնյայտ է, որ ԼՂ հակամարտութեան կողմերը, նախորդ մի քանի ամիսների ընթացքում հաւաստիացնելով, որ 2006 թուականին ԼՂ հակամարտութեան

Շաբ.բ էջ 19

A.B.A. INSURANCE SERVICES

Authorized Agent CA Insurance Lic. # 0494056
Blue Shield of California
 An Independent Member of the Blue Shield Association

1975-2005
30th ANNIVERSARY
 E-mail: BMaronian@AOL.com

INSURANCE COVERAGE CAN HELP YOU FINANCIALLY

ԵՐՔԵՔ ՈՒՇ ԶԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ԶԵՐ ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

BEDROS, SIAMANTO MARONIAN

818 **500-9585** ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205
ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"

ԱՋԱՏ ԲԵՍ

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍԸ ԵՒ ՍՈՒՐԲ ՎԱԼԵՆՏԻՆԸ

Սիրահարներն իրենց տունին սպասում են անհամբերությամբ: Մեր առաքելական եկեղեցու տոնացույցի համաձայն՝ տունը կոչվում է Սուրբ Սարգիս գորավարի անունով: Սուրբ Սարգիսը սիրոյ եւ երիտասարդութեան հովանաւորն է եւ բարեխօսը Աստուծոյ մօտ: Ինչպէս պատմում է ժողովրդական առասպելը, Սարգիսն իր 39 քաջ գինուորների հետ ճակատամարտի յաղթանակը նշելիս է լինում կայսերական պալատում: Երբ բոլորը գինովցած քնում են, կայսրը պատուիրում է 40 աղջիկներին սպանել 40 քաջերին: Երեսուները աղջիկները կատարում են հրամանը, իսկ քառասունները սիրահարում են քնած քաջին՝ տեսնելով նրա առնական եւ խաղաղ դէմքը, եւ համբուրելով՝ արթնանում: Սարգիսն իր արագահաս եւ ճերմակ նոսր հեծնում է, իր հետ վերցնում սիրահարուած աղջկան, ջարդ ու փշուր է անում դարպասները եւ հեռանում քաղաքից:

Այս օրը սիրահարուածները միմեանց բացիկներ, ծաղիկներ ու քաղցրաւէնիք են նուիրում: Սակայն վերջին տարիներին հայ երիտասարդները որպէս սիրոյ տուն նշում եւ նուէրներ են պատրաստում Սբ. Վալենտինի տոնին՝ փետրուարի 14-ին: Հայ Առաքելական եկեղեցու հոգեւորականները մերժում են այս տոնը.

-Դա մերը չէ: Եթէ մենք Սուրբ Ծնունդը նշում ենք Յունուարի 6-ին, ուրեմն կարիք չունենք նշելու այդ տոնը Դեկտեմբերի 25-ին, ինչպէս արեւմուտքում: Իրենք ունեն իրենց աւանդոյթները, մենք ունենք մերը: Մերը աւելի խորն է, մերը աւելի ազգային է եւ հոգեհարազատ մեզ,- ասաց Արգաւանդի Սուրբ Սարգիս եկեղեցու հոգեւոր հովիւ Տ. Շմաւոն Քհնյ. Ղեւոնդեանը: Պետական համալսարանի դի-

մաց օղակաձեւ այգում քայլող սիրահար գոյգը՝ Նարեկն ու Անին, խոստովանեցին, որ իրենց տունը նշելու մասին մտածել են դեռ երկու շաբաթ առաջ. փետրուարի 11-ին եկեղեցի են գնացել, իսկ փետրուարի 14-ին ուստորան են գնալու.

-Ի հարկէ, մեզ համար կարեւորը Սուրբ Սարգիսն է. գնացինք եկեղեցի, մոմ վառեցինք, աղօթեցինք: Միասին եղանք, ու մեզ հետ էր նաեւ Աստուծոյ օրհնութիւնը. սուրբ Սարգիսն տունը հոգեւոր հարազատութիւն ունի: Բայց մեզ համար լաւ է, որ նշում ենք նաեւ Սուրբ Վալենտինի տոնը, որովհետեւ եւս մի յարմար առիթ է ուրախանալու, չնայած սիրահարների համար բոլոր օրերն էլ տոներ են: Մենք դրա մէջ ոչ մի վատ բան չենք տեսնում. եթէ Սուրբ Սարգիսը մոռանալինք, դա ուրիշ է, բայց մենք նշում ենք երկուսն էլ:

Թերեւս պէտք է շնորհակալ լինել նրանց, որ երկրորդական պլան չեն մղում մեր ազգային տոնը: Իսկ Արեգն ու Գոհարիկը նշելու են միայն Սուրբ Վալենտինի տոնը, որովհետեւ, ըստ նրանց, Սուրբ Սարգիսը աւելի եկեղեցական ու կրօնական տոն է: Եւ, ընդհանրապէս, երիտասարդների մեծ մասին գրաւում է Սբ. Վալենտինը նշելու աշխարհիկ ձեւը: Եթէ կաթոլիկ եկեղեցու այս տոնը նշում են ժամանակակից ժամանցային վայրերում, ապա Ս. Սարգիս գորավարի տոնը նշում է ոչ միայն եկեղեցական ծէսով, աղօթքով, այլեւ ժողովրդական սովորոյթներով: Ամենատարածուած սովորոյթներից է աղի բլիթ ուտելը, որը Հայ եկեղեցու աւանդութեան հետ առնչութիւն չունի, եւ փոխինդով մատուցարանը տան տանիքին կամ պատուհանագոգին դնելն ու Ս.

Սարգիս գորավարի ձիու պայտի հետքին սպասելը: (Ըստ աւանդոյթի՝ Ս. Սարգիսը պէտք է հրեշտակների ուղեկցութեամբ անցնի եւ ուժ մատուցարանի մէջ դրուած ալյուրի կամ փոխինդի մէջ թողնի իր սպիտակ ձիու պայտի հետքը, եւ այդ տարի կ'իրականանայ սիրահարի երազանքը): Տէր Շմաւոնի խօսքերով՝ այսօր շատերը այս տոնը կապում են միայն աղաբլիթ ուտելու հետ, բայց այն աւելի խոր իմաստ ունի, եւ ապացուցները մէկն այն է, որ քրիստոնէութիւնը սիրոյ եւ ուրախութեան ջատագով հաւատք է:

-Սրանք ժողովրդական սովորոյթներ են եւ դրանց մեծ նշանակութիւն տալը, կարծում եմ, իմաստ չունի: Աղի բլիթի այս սովորոյթը ժամանակաւոր, անցողիկ բնոյթ ունի: Եթէ մէկը աղի բլիթ ուտի եւ երազում տեսնի այն մարդուն, որի հետ կ'ամուսնանայ, էլ աղի բլիթ

չի ուտի: Բայց տունը իր մնացած ժողովրդական արտայայտումներով աւելի մնայուն է,- ասաց Տէր հայրը: -Չի կարելի ժողովրդական այդ ուրախութիւններն ու տոնախմբութիւնները մերժել եւ ասել՝ ոչ: Ժողովուրդն ուրախանում է այնպէս, ինչպէս որ ինքը գտնուած է յարմար եւ ինչպէս, որ ինքը կարող է ուրախանալ:

Տէր Շմաւոնը երբեք աղի բլիթ չի կերել եւ չի պատրաստում ուտել, Աստուծոյ կամօք նա հանդիպել է իր կնոջը եւ բլիթը ուտելու կարիք չունի:

-Եթէ ինչ-որ առումով հետաքրքրեք, ես, թերեւս, երիտասարդ ժամանակ ուտէի, բայց նշանակութիւն չեմ տուել դրան: Ես համարել եմ դա երկրորդական եւ անգամ երրորդական ինչ-որ մի բան, թէպէտ եւ չեմ մերժում: Սուրբ Սարգիսն տունը շարժական է եւ այս տարի նշուեց փետրուարի 11-ին:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly Enclosed a check for (one year) * \$50,00 for USA * \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada. * \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas. Name: Address: City: State: Zip Code: Country: Tel : Fax :

Շ.Բ.Ը.Ս. ՀԱՅ ԿԻՆ Հ.Բ.Ը.Մ.-Ի ՓԱՌԱՊԱՆԾ 100 ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ Հայ Կին Միաւորը կը ներկայացնէ չորս կին գրողներ Սօնա Զէյթլեան Հայութեան Ներդրումը Վաղ Միջնադարեան եւ Արդի Եգիպտոսի Պատմութեան Մէջ Մէյրի Թէրզեան The Immigrants' Daughter Ժանէթ Քասունի Մանկական Աշխարհ Ու Բեմ Սարա Պլիքեան Loyalty Գինեձօնի Հանդիսութիւնը տեղի կ'ունենայ Հ.Բ.Ը.Մ.-ի Ալիք Մանուկեան Կեդրոնի Պոյանեան Սրահին մէջ AGBU Alex Manoogian Center 2495 East Mountain Street Pasadena, CA 91104 2006 Մարտ 4, Շաբաթ երեկոյեան ժամը 4:00-ին Հիրասիրութիւն Cheese & Wine

ՊՈԼՍԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԳՐՈՒԹԵԱՆ 30ԱՄԵԱԿԻ եւ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ ՄԻԻ 15ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹԻ «ԳԻՆԵՁՕՆԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ» նուիրում՝ Մտաւորական, բանաստեղծ՝ ՎԱՄԴԵՐԵՍ ՓԱՐԱՎԷՕՉԵԱՆԻ «ԴԻՆ ԶԵՄ ՍՊԱՆԻՅ» Բանաստեղծական Հատորին Հրատարակչութիւն՝ Պոլսահայ Միութեան Մշակութային Ցամոձմախումբի Թիւ 1 Ելոյթ կ'ունենան ԵՐՈՒԿԵՂ ԳՈՋՈՒԹԵԱՆ եւ ՓՐՕՏ. ՕՇԻԵ ԲԷՇԻՇԵԱՆ Գեղարուեստական Ցայտագիր Հիմնադրամ, Փետրուար 23, 2006 երեկոյեան ժամը 8:30ին Ա. Պետրոս եկեղեցւոյ «Նագուպեան» սրահին մէջ Մանրամասնութեանց համար հեռաձայնի՝ Տէր. Յովհաննէս Գուլակ Աւետիքեանին (818) 800 - 1976 (cell) ՊՈՐՏԱՊՈՒԹԻՆ ՄԱՍԻՍ ԱՋԱՏ

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԿԱՐԳԻ ԵՐԱԺԻՇՏՆԵՐ

ԱՆԳԻՆԷ ՔԷՇԻՇԵԱՆ ՄՈՒՐԱՏՆԱՆ

Շատ մը քառեակներ կը ծնին, բայց շուտ կ'անհետանան:

Այժմ երաժշտասերներու մակարդակը այնքան պահանջկոտ դարձած է, որ քիչեր միայն վառ կը մնան չիշողութիւններու մէջ: Այս բարձրորակ նորակագմ «Լարք»ի «Տիլիջան» սենեկային խումբը հաստատ եւ ապահով կը

տուժեամբ օժտուած աշխարհը: Մանսուրեանի երաժշտութիւնը համաերոպական նուաճումներու եւ ազգային երաժշտական մշակոյթի լաւագոյն աւանդութիւններու միաձուլման օրինակն է: Ան նուաճած է գեղագիտական նոր հիմքի վրայ կոմիտասեան սկզբունքներու վերածնունդը: Զգացական, զուսպ եւ, մտայնացումը յստակ եւ մասերը ներդաշնակ հաւասարակշռուած:



շարունակէ իր համերգներու շարքը, իւրաքանչիւրին նոր ունկնդիրներ հմայելով:

Կիրակի, Յունուար 22ին «Colburn» գեղագիտական դաստիարակութեան կեդրոնի սրահը (200 S. Grand Ave.) 3/4 է աւելի, ամէն տարիքի երաժշտասերներ ներկայ էին, ըմբոշինելու մաքուր, յղկուած համոյթ մը:

Երաժշտասերներու հետաքրքրութիւնն ու նուիրուածութիւնը «Տիլիջան»ի հանդէպ, ոչ միայն խումբին կատարեալ ամբողջական ըլլալ է, այլ նաեւ բարձր արժանիքներով անձնակազմի մասնակցութիւնն է:

Բոլորն ալ բարձրորակ երաժիշտներ են, միջազգային բեմերու արժանացած, առանձին, առանձին լաւագոյն մենակատարներ են: Ունին փայլուն վարպետութիւն, անկրկնելի ոճ, գերազանց ճաշակ, բարձր արուեստագիտութիւն, եւ գեղարուեստական կատարողականութիւն:

Կատարեալ արուեստի երեկոյ մըն էր: Անոնք ներկայացան որպէս գեղարուեստական հասուն խումբ: Կրցան գոհացնել ներկայ եղող խստապահանջ ունկնդիրն ներկայացուցին այնպիսի մակարդակ, որ պարունակելով աւանդականը, նաեւ ինքնատիպ էր, նոր եւ այժմէական:

Նուագուեցաւ Ալան Յովհաննէս թիւ 4 եւ Տիգրան Մանսուրեանի թիւ 2 լարային քառեակները: Ա. Յովհաննէս քառեակը իր մանկութեան հօրեղբորը այցելութիւններու տիտուր եւ ուրախ չիշատակները, ներկայացուցած է 3 մասերով: Ա. եւ Գ. մասերը թախճագին հնչիւններով նկարագրած է «սիրելի» ծառին փճացումը, բայց շուտով կը փոխուի պատկերը զուարթ չիշատակներու թեմայով, որ կը շարունակուի պարի ութմի: Նուագեցին կեանքով եւ եռանդուն, պարի բնոյթի համաձայն, դրսեւորելով ուրախ տրամադրութիւնները:

Տիգրան Մանսուրեանի թիւ 2 քառեակը հնչեց շատ ամբողջական, զուսպ եւ զգայուն, ներկայացուցելով հեղինակին բարդ, հոգեկան ապրումներով անհատուած հարս-

Ջիանալիօրէն օգտագործած է հայկական միջնադարեան հոգեւոր եւ կոմիտասեան երգարուեստի յստակ ելեւէջները: Յստակ են մտքերը, ցայտուն ու բազմերանգ են անոր արտայայտած հոգեկան ապրումներն ու տրամադրութիւնները:

Քառեակը դրսեւորեց զգացումներու, պայմաններու հակասական անցումները, որ ամփոփուած են 3 մասերու մէջ լարային քառեակը (թիւ 2) գրած է երաժշտական եղ. Խաղաղործեանի չիշատակին, կը բովանդակէ իր մտածողութիւնը բնորոշող, ճակատագրի անխուսափելիութեան գաղափարը եւ դրոշմուած է քնարական տեսիլներով, տառապալի երազներով, յուզումի երեւակայութեամբ:

Ա. շարժը (Andante), սկսան թախճոտ տրամադրութեամբ, որ աւելի խորացաւ Բ. շարժին մէջ (Larghetto): Կոմիտասի «Պարուն Ա» երգի հնչիւնները հիանալի դաշնաւորուած էր, խոր վշտի, տառապանքներու հոգեվիճակը դրսեւորելով:

Որչափ իրապաշտ մօտեցումով յայտնաբերած է կեանքի խորհրդաւոր վախճանի գաղափարը: Գ. շարժը պատկերալից պահն է, մոլթ եւ մուսլ: Եկեղեցւոյ կամարներու ներքեւ կ'երեւակայէ սեւ տարազներով վանահայրեր, մուտքը, որ կ'արտայայտէ խորհրդաւոր պատկերը անխուսափելի մահուան: Նուագը շափագանց մուսլ, հանդարտ եւ զգայուն է, մարմինս սարսուաց պատկերը երեւակայելով: Լարայիններու կամրթաւոր մեղեդի նուագը աւելի սրտաճմլիկ էր:

Քառեակը կատարեց երաժշտականութեամբ, հմայիչ արտիստականութեամբ, ճաշակով, տրամադրութիւններու գունեղ անցումներով:

Կարելի չէ չհիանալ Մենտըլ-սընի ոճին բնորոշ հմայիչ միաժամանակ խորաթափանց կատարումին Լարային Ութեակը (E flat major op 20): Մանաւանդ յաջող էր Բ. մասի նուրբ, հեզասահ, մեղեդիի փոխանցումները գուգանուագներով:

Շաբ.ը էջ 17

ՄԻԱՅԵԱԼ ԸԱՅԿԱԿԱՆ ՖՈՆՏԸ 2005-Ի ԸՆԹԱՑՔԻՆ \$24 ՄԻԼԻՈՆ ՆՊԱՍՏ ԸԱՅԹԱՅԹԱՆ Է ԸԱՅԱՍՏԱՆԻՆ

Կլէնտէյլ, Գալիֆորնիա - 2005-ի ընթացքին Միացեալ Հայկական Ֆոնտը Հայաստանին հայթայթած է մօտ \$24 միլիոն արժողութեամբ մարդասիրական նպաստ՝ մեծաւ մասամբ դեղորայք եւ բժշկական պիտոյքներ, ըստ կազմակերպութեան ելեւմտական վերջին քննարկման:

Քննարկումը ցոյց կու տայ նաեւ թէ Միացեալ Հայկական Ֆոնտը իր եկամուտին նուազ քան 1 տոկոսը տրամադրած է վարչական ծախսերու, մնացեալ 99 տոկոսը յատկացելով Հայաստանի ու Ղարաբաղի ժողովուրդի օժանդակութեան:

Անցեալ 16 տարիներու իր գործունէութեամբ, Միացեալ Հայկական Ֆոնտը Հայաստան փոխադրած է \$415 միլիոն արժողու-

թեամբ մարդասիրական օգնութիւն՝ 135 թուիչքներով եւ 1,237 ծովային արկղներով:

Միացեալ Հայկական Ֆոնտը համատեղ աշխատանքն է Ամերիկայի Հայկական Համագումրաին, Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան, Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան, Հայ Օգնութեան Միութեան, Հայաստանեայց Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Առաջնորդարանին, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Ամերիկայի Առաջնորդարանին, եւ Լինսի Հիմնարկին:

Յաւելեալ տեղեկութեան համար, կը խնդրուի դիմել Միացեալ Հայկական Ֆոնտի գրասենեակին՝ 1101 North Pacific Avenue, Suite 301, Glendale, CA 91202 կամ հեռաձայնել (818) 241-8900 թիւին:

ԱՐԺ. Տ. ՆԵՐՍԵՍ ԱԿԱԳ ԲԸՆՅ. ՆԵՐՍԵՍԵԱՆ Կ'ԱՅՅԵԼԷ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՍԸ

Պիտի Պատարագէ եւ Զարոգէ Արիզոնայի մէջ

Հայց. Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի Բարեխնամ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արեւմտեան Երազարական սիրով յանախ կը դիմաւորէ եւ յատուկ յարգանքի եւ հիւրասիրութեան կ'արժանացնէ Թեմս այցելող բոլոր հոգեւորականները եւ իր հրաւերով անոնք Սուրբ Պատարագ կը մատուցանեն եւ իրենց հոգեւոր պատգամը կու տան հաւատացեալներուն:

Այսու գոհունակութեամբ կը յայտնենք Թեմիս Հոգեւոր Հովիւներուն, Ծիսական Խորհուրդներուն, Թեմական Պատգամաւորներուն, յարակից կազմակերպութեանց եւ մեր համայն հաւատացեալ ժողովուրդին, թէ Լոնտոնի Բրիտանական Թանգարանի (BRITISH MUSEUM) Արեւելեան Բաժանմունքի Տնօրէն՝ Արժ. Տ. Ներսէս Աւագ Քիմյ. Ներսէսեան Փետրուար 18-23, 2006 հիւրաբար պիտի այցելէ Արեւմտեան Թեմը:

Առաջնորդ Սրբազան Հօր հրաւերով, հիւր հոգեւորականը Սրբոց Վարդանանց Զօրավարացն Տօնին առթիւ, Կիրակի, Փետրուար 19ի առաւօտեան պիտի Պատարագէ եւ Զարոգէ Արիզոնայի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ մէջ, որուն հասցէն է 8849 East Choila Street, Scottsdale, AZ 85260.

Սուրբ Պատարագի աւարտին Արժ. Տ. Ներսէս Աւագ Քիմյ. Ներսէսեան դասախօսութիւն մը պիտի տայ Բրիտանական Թանգարանի Հայկական Բաժնի եւ Զեռագիրներու Մասին: Վստահ ենք շահեկան եւ հետաքրքրական բանախօսութիւն մը պիտի ըլլայ:

Արեւմտեան Թեմը իր խորին երախտագիտութիւնը կը յայտնէ հիւր հոգեւորականին եւ յարատեւ յաջողութիւն կը մաղթէ իր ազգոգուտ առաքելութեան:

ՀԲԸՄ ԱՐՄՏԵՐԱՆՈՒՄԹ ԹԱՅԵՐԱՆՈՒՄԹ

ՀԲԸՄ ՀԱՐՈՒՐԱՄԵՆԻ

ՄՍՄԻ ԾԱՌԹԵՆՑՑ

Կառավարութիւն 1 Շրջա

Ինքնուրուի ԳՐԻԳՈՐ ԱՄԹԻՍՏԵԱՆ

Մարտ 4-ի Ներկայացումը կը հովանաւորէ Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը

Տոմսերը Ստանալու Ըամար Դիմել (818) 502-3233

ԲՆԱԲՈՒԺՈՒԹԻՒՆ

**ՀԻՊՆՈՍԱԲՈՒԺՈՒԹԻՒՆ-ԲՆԱԲՈՒԺՈՒԹԻՒՆ
«ԱՏՐԵՍԱՅԻՆ ՎԻՃԱԿՆԵՐ ԵՒ
ՄԻՏՔ-ՍԱՐՄԻՆ»**

ԲԺԻՇԿ ԹԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂԻՆԱՆ

**ՆԱԽԱԲԱՆ
ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ**

«Դասական, արեւմտեան, ուղղափառ» ճանչուած բժշկութեան կողքին, որ նաեւ կը կոչուի հեփոկրատեան բժշկութիւն, այս բժշկութեան հայրը հանդիսացող Հիփոկրատի անուան հետեւողութեամբ, որ 25 դարերու պատմութիւն մը ունի, ներկայիս նաեւ կը գործէ երկրորդ ձեւի բժշկութիւն մը, աւելի հին թէեւ եւ սակայն յատկապէս զարգացած երկիրներու մէջ, ինչպէս Եւրոպայի եւ Ամերիկայի Միացեալ Նահանգները գոյութիւն ունի, երթալով աւելի կիրարկուող, «արեւելեան», «ալլընտրական» սահմանուած բժշկութիւնը, որ Ասիայէն եւ արեւելեան երկիրներէն ներածուած է: Այս բժշկութիւնը աւելի հին է քան դասականը, եւ սակայն անոր բազմաթիւ ճիւղերը նոր է որ սկսած են գործադրուել դարմանատուներէն եւ հիւանդանոցներէն ներս:

Այս երկու տեսակ բժշկութիւնները, հիւանդութեանց դարմանումի ընթացքին, կ'օգտագործեն տարբեր ձեւի եւ բովանդակութեան միջոցառումներ առաւել կամ նուազ յաջողութեամբ: Դասական բժշկութեան պարագային, այս միջոցառումները առաւելաբար քիմիական բովանդակութեամբ դեղեր են, եւ վիրաբուժական միջամտութիւնները: Անուրանալի է որ այս բժշկութիւնը, դարերու ընթացքին, մարդկութեան մեծ բարիք բերած է, եւ հրաշքի համազօր արդիւնքներու հասած է: Տակաւին ալ կը շարունակէ, մանաւանդ «թեքնոլոգիք» իր ձեռքբերումներով, նշանակելի յաջողութեանց հասած, հիւանդութեանց բուժման ընթացքին: Վերջին տարիներուն սակայն, մանաւանդ դեղերու քիմիական բովանդակութեան պատճառով ժխտական, քովնտի, վնասակար ազդեցութիւնները լուրջ մտահոգութիւն կը պատճառէ հիւանդներուն, որոշ վերապահութիւն մը սկսած է հիւանդներու մօտ, եւ այս վերջինները երթալով կը զգուշանան արեւմտեան բժշկութեան դիմելու: Սուր հիւանդութեանց պարագային սակայն, երբ անհրաժեշտ է վիրաբուժութիւն կատարել, արեւմտեան բժշկութիւնը կը մնայ անփոխարինելի: Հիւանդները ուրիշ ելք չեն ունենար եւ ստիպուած են դիմելու արեւմտեան բժշկութեան, որ յաճախ հրաշք կնայ գործել: Մարդկութիւնը երբեք ալ պիտի չկարենայ փոխարինել արեւմտեան, դասական բժշկութիւնը, քանի ան պիտի շարունակէ կիրարկուել կատելագործուած հիւանդանոցներէն ներս եւ պիտի շարունակէ իր հրաշքները իրագործել:

Երկրորդ տեսակի բժշկութիւնը, գոր կոչեցինք ալլընտրական, կամ արեւելեան, նոնյպէս դարերով օգտագործուած է, եւ իր բազմաթիւ ճիւղերը, որոնք շարքը երկար է, բուսական միջոցառումներէն մինչեւ ասեղնաբուժութիւնը, «մասաժի» հպումները, «ետիան», խոկումները, երթալով աւելի կարեւորութիւն կը ստանան, մանաւանդ ոչ-վիրաբուժական, քրոնիկական ճանչուած հիւանդութեանց

պարագաներուն, եւ դարձեալ անուրանալի օգտակարութիւն ունին հիւանդներուն: Թէեւ արեւելեան այս բժշկութեան «ալլըտրական» բացատրութիւնը կը տրուի, կը խորհինք սակայն որ աւելի յարմար կ'ըլլայ զայն նկատել լրացուցիչ կամ «երկրորդող», փոխանակ «փոխարինող»: Այս բժշկութիւնն ալ, դարերով օգտակար եղած է մարդկութեան, մանաւանդ որ ան գերծ է քիմիական բաղադրութիւններ պարունակող, նիւթերու գործածութենէն:

Ուրեմն թէ դասականը եւ թէ արեւելեանը իրենց դարերու փորձը ունին, եւ անուրանալի է անոնց օգտակարութիւնը:

**ՀԻՊՆՈՍԱԲՈՒԺՈՒԹԻՒՆ
ԿԱՍ ԲՆԱԲՈՒԺՈՒԹԻՒՆ**

Վերոյիշեալ երկու բժշկութեանց կողքին, որոնք ինչպէս ըսուեցաւ, իւր քանչիւրը իր օգուտը ունի, շրջանէ մը ի վեր գոյութեան իրաւունք ստացած դարմանումի նոր ձեւ մը, որ հիպնոսաբուժութեան

թիւն կայ քնաբուժութիւն կը ճանչուուի, թէեւ այս մէկը եւս, հակառակ իր դարաւոր պատմութեան, միայն քանի մը տասնամեակներէ ի վեր կը կիրարկուի, եւ սկսած է ընդունուիլ մանաւանդ «Միտք-Մարմին» փոխ-յարաբերութեան ընդհանուր շրջագիծէն ներս: Այս, անշուշտ, ամենեւին չի նշանակեր որ դասական եւ արեւելեան բժշկութիւնները անտեսած էին մտքի ազդեցութիւնը մարմնի վրայ, եւ անոր ունեցած դերը հիւանդութեանց ծագման ընթացքին: Վերջին երկու դարերու ընթացքին, մանաւանդ բժիշկներ, աւստրիացի Ֆրանց Անթոն Մեսմեր, անգլիացի ձէյմզ Պրէյտ, քաջածանօթ Սիլվիոս Ֆրէօյտ, Մոլլթոն Էրիքսը եւ ձոն Քաֆֆանս, զարգացուցին հիւանդութեանց «դարմանումի» ձեւ մը, որ այս վերջիններու կողմէ կոչուեցաւ «հիպնոսային» միջամտութիւն, յունական «հիպնոզ» (hypnosis) բառէն յառաջացած, որու միջոցաւ կարելի է ձեռք բերել մարդկային վարուելակերպի փոփոխութիւն եւ բարելաւում: Հիպնոսաբուժութեան միջոցաւ ուրեմն, մարդիկ, մանաւանդ «ստրեսային» վիճակներէ, «քրոնիկ» ցաւէ, ընկճումներէ, մտմտմութիւններէ, ինքնավստահութեան պակասէ, զանազան ձեւի

վախերէն, անքնութենէն, եւ նման բազմաթիւ հոգեկան եւ ֆիզիքական վիճակներէ տառապողները կրնան իրենց տագնապներուն վերացում, թեթեւացում եւ բարելաւում գտնել, եւ այս առանց դասական եւ արեւմտեան բժշկութեան պատճառով քովնտի վնասներուն (side-effects):

Նաեւ եթէ կ'ուզեն վնասակար սովորութիւնները, ինչպէս տարիներու ծխելու սովորութիւնը, գիրութիւնը, ասպարէզային ձախողութիւնը, բախտախաղի մոլութիւնը, անյուսուցիւնը, ամօթային վիճակները, սեռային անկարողութիւնը, եւ ասոնց նման բազմաթիւ անախորժ վիճակներէ ձեռք բազաւորել, կրնան հիպնոսաբուժութեան միջոցաւ դարման գտնել: Նոյնիսկ կարգ մը լուրջ հիւանդութիւններ, որոնք հոգեկան պատճառներ ունին, ինչպէս ստամոքսի կեղը (իւլսեր) կամ զգայնոտութեան վիճակներ, կրնան վստահաբար բարելաւում ստանալ: Ի վերջոյ եթէ հետապնդուած նպատակը աւելի առողջ կեանք մը, եւ աւելի հաճելի կեանք մը կը հետապնդուի, հիպնոսաբուժութիւնը շատ աւելի ապահով եւ շատ աւելի անվնաս բժշկութեան ձեւ մը կը հանդիսանայ:

(Շարունակելի)

LARK Musical Society Presents

Master Recital



SERGEY - Violin

KHACHATRYAN

LUSINE - Piano

Wednesday, March 15, 2006 8:00 p.m.

ALEX THEATRE
216 North Brand Boulevard
Glendale, California

Donation: \$75, \$40, \$30, \$20
For additional information contact
the LARK Office (818) 500-9997

Massis Weekly

Volume 26, No. 4

Saturday, February 18, 2006

OSCE Calls Nagorno-Karabakh Summit A Failure

The two-day summit meeting on the Nagorno-Karabakh conflict, held at Rambouillet outside Paris, ended in failure, the Organization for Security and Cooperation in Europe (OSCE) said late Saturday.

"Despite intense discussions, the positions of the parties on certain sensitive principles remained identical to what they have been during the past months," the OSCE's Group of Minsk said in a press statement.

Representatives from the Group of Minsk, which consists of the United States, France and Russia, mediated the meeting between Robert Kocharian and Ilham Aliev.

Shortly before the talks broke up, a diplomatic source told Deutsche Presse-Agentur dpa, "There have been no breakthroughs and no agreements."

Officials had hoped that Kocharian and Aliev, who began meeting Friday, would agree on basic principles which would form the basis for a final deal to be negotiated later this year.

On Tuesday, official Yerevan played down the dramatic failure of the latest Armenian-Azerbaijani summit on Nagorno-Karabakh, with Foreign Minister Vartan Oskanian saying that a breakthrough may still be achieved this year.

"Nothing should be ruled out," Oskanian told reporters. "True, no agreement was reached at Rambouillet. But that doesn't mean there will be no progress in the course of this year."

Sources close to the Rambouillet summit have told RFE/RL that it collapsed due to disagreements over Karabakh's future status and a time frame for Armenian pullout from one of six Azerbaijani districts surrounding the disputed enclave.

The parties had reportedly agreed in principle to enable Karabakh's predominantly Armenian population to determine



Kocharian and Aliev staring at each other across the table during failed Rambouillet summit

the status in a referendum to be held within 10-15 years from the start of Armenian troop withdrawal. Such a vote would almost certainly formalize Karabakh's reunification with Armenia.

Meanwhile, most observers believe that Karabakh peace remains elusive because both Aliev and Kocharian lack domestic legitimacy. Neither leader has held a presidential or parliamentary election recognized as democratic by the West. "That is the reason why there will be no progress in the Nagorno-Karabakh peace process as long as they remain in power," said former Foreign Minister Aleksandr Arzumanyan.

In a related development, the president of the Council of Europe Parliamentary Assembly, Rene van der Linden, expressed on Tuesday his "great disappointment" at Aliev's and Kocharian's failure to break the deadlock. "I must once again reiterate that there will be no sustainable development or prosperity for the region

and no future for its children without a peaceful settlement to this dispute," he warned both sides in a statement from Strasbourg.

"I strongly encourage all parties to resume their discussions as soon as possible and with renewed determination," van der Linden added.

"After the blow suffered at Rambouillet it will be really difficult for the co-chairs to come up with something new for continuing negotiations," writes "Haykakan Zhamanak." The paper claims that both conflicting parties fooled the international community last year into thinking that the Karabakh conflict can be resolved in 2006.

Armenia, Iran Stress 'Regional Significance' Of Bilateral Ties



Foreign Ministers Mottaki and Oskanian

YEREVAN -- The foreign ministers of Armenia and Iran praised what they described as a growing "regional significance" of close relations between their nations after holding talks in Yerevan on Tuesday.

Iranian Foreign Minister Manouchehr Mottaki, making his first official visit to Armenia since his appointment last September, reaffirmed the Islamic Republic's desire to continue to deepen political and economic ties with its sole Christian neighbor. He pointed to the long history of Armenian-Iranian interactions which he said is "replete with mutual friendship and warmth."

"We are building multi-faceted relations with our neighbor and friend Armenia," Mottaki told a joint news conference with his Armenian counterpart Vartan Oskanian. "We are trying to ensure that they have a regional significance."

Continued on page 3

United Arab Emirates Ambassador Poladian Awarded 'Independence Order'

DUBAI (Azad-Hye) -- On 11 February 2006 the President of the United Arab Emirates Sheikh Khalifa bin Zayed Al Nahyan has awarded the "Independence Order" to outgoing Armenian Ambassador Dr. Arshak Poladian, in appreciation of his efforts made during his tenure to strengthen and expand the ties between Armenia and the UAE.

Բացման խօսքով բեմ բարձրացաւ օրուան շնորհալի հանդիսավարուհի Մարալ Ոսկեան, որ լայն բաց մտերիմ դրուատումներով արագօրէն ուրուագծեց մեծարեալ բանաստեղծի անհատականութիւնը՝ իր մարդկային բարձր արժեւորումով, ազգային անձնագոհութեան փաստերով ու մտաւորական հազուագիւտ բարեմասնութիւններով: Հաճելի էր հանդիսավարուհին մօտ նշմարել անսեթեւեթ գուարթամութեան երանգ մը՝ իր լրջախոհութեան առնչութիւն:

Ապա ընթացք տրուեցաւ երեկոյի յայտագրին: Կեանքի այլազան դրուագներուն ու կենսագրական նշանակալի իրադարձութիւններուն ընդմէջէն, փրոֆ. Օշին Քէշիշեան

ներկայացուց «Գարակեօզեան - Մշակոյթի Մարզը»: Ան վեր առաւ եւ արժեւորեց հեղինակին մարդկային ցայտուն գիծերը, ինչպէս նաեւ իր պատկառելի աւանդը հրատարակչական բնագաւառէն ներս: Իրեն կը պարտինք հայրենի շարք մը մեծարժէք ստեղծագործութիւններու եւ գեղատիպ գիրք-ալպոմներու շքեղ հրատարակութիւնները արեւմտահայ մշակութային կեդրոններու մէջ:

Յաջող հաղորդականութեամբ, Արշօ Ազատեան ասմունքեց հատուածներ Գարակեօզեանի բանաստեղծութիւններէն: Ողջոյնի խօսքով ելույթ ունեցան Գէորգ Քրիստինեան, Գարուշ Հարեանց եւ Երուանդ Գոչունեան՝ իրենց ջերմ մաղթանքները յղելով մեծարեալին:

«Արարման Հետ» քերթողագիրքի վերլուծումով հանդէս եկաւ ծանօթ գրաքննադատ, գրող, մշակութային ու հասարակական գործիչ Երուանդ Ազատեան: Բանաստեղծին իր բնութագրման մէջ ան յիշեց իր ըմբօստ ոգին, համարակալին ցաւին հանդէպ կարեկցութիւնը սիրող մարդը: Յիշեց ընկերակցական գաղափարախօսութեան ազդեցութիւնը իր ընդհանուր աշխարհայեացքին վրայ՝ հակառակ աւելի ուշ գալիք լուսախաբութիւններուն: Յանձնառու գրող է ան, որ իր հայեացքը նոյն ատեն մխրձած է մարդկային հոգիին խորը՝ գերզգանց մարդկայնութեամբ յագեցած: Իր հմուտ, լաւապէս հետախուզուած վերլուծումին մէջ, Երուանդ Ազատեան հարազատօրէն կը բնորոշէ բանաստեղծին ընդհանուր կերպարը: «Բովանդակ գիրքի տարածքին կը տիրապետէ խոհականութիւնը, իմացական փնտռուքը, մարդկային ճակատագրի ունայնութիւնը, ինչպէս անհատի վախճանականութեան վախը, առանց բարձրաթիւի բառերու գործածութեան, այլ պարզ ու գրուցային զնայքով մը»:

Երեկոյի աւարտին խօսք առաւ մեծարեալը, որ իրեն յատուկ պարգուութեամբ ու ճշմարիտ համեստութեամբ իր շնորհակալութիւնը յայտնեց բոլորին:

Սրտանց կը մաղթեմ - «Արարման» դ. մաքուր էջերուն վրայ վախճելու փռուած քու վարդ հոգիդ անթառամ մնայ դեռ երկար տարիներ, սիրելի Վարդերես, յօգուտ հայ քերթողութեան:

ԼԻԲԱՆԱՆ

«ՎԱՅՐԻՃ ԵՒ ՎԵՐԺԻՆ ԾԵՐԵՃԵԱՆ ԹԱՏՐԵՐԳՈՒԹԵԱՆ ՄՐՑԱՆՔ»-Ի ՄՐՑՆԱԿԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ



Յաջորդաբար երկրորդ տարին ըլլալով, երէկ երեկոյեան ժամը 6:30ին Վաչրիճ եւ Վերժին ձէրէճեաններու բնակարանին մէջ տեղի ունեցաւ 2004-2005 տարիներու «Վաչրիճ եւ Վերժին ձէրէճեան թատերգութեան մրցանակ»-ին մրցանակաբաշխութիւնը: Ներկայ էին լիբանանահայ մամուլի ներկայացուցիչներ: Դատական կազմի անունով ժիւրայր Դանիէլեան բարի գալուստի խօսք արտասանելէ ետք ներկաներուն ըսաւ, թէ սոյն մրցանակին մասնակցած են 9 սփիւռքահայ հեղինակներ՝ 11 թատերախաղերով: Ան նշեց, թէ տարուան ընթացքին զանազան հանդիպումներով եւ կարծիքներու փոխանակումով դատական կազմը միաձայնութեամբ յանգեցաւ այն որոշումին, թէ ներկայացուած թատերախաղերէն երկուքին տրուին երկրորդութեան մրցանակներ: Մրցանակակիր 2 թատերադիրներն են Արա Արծրունի՝ իր «Անաւարտ վէպ»ը թատերգութեան, եւ Վաչէ Ատրունի՝ իր «Ծառը» թատերգութեան համար: Մրցանակակիրները կը ստանան 1500 ամերիկեան տոլար եւ իրենց թատերախաղերը կ'արժանանան »Վաչրիճ եւ Վերժին ձէրէճեան թատերգութեան մրցանակ»-ի մատենաշարի հրատարակութեան:

Վերժին ձէրէճեան խօսք առնելով ողջունեց ներկաները եւ մեծ գոհունակութիւն յայտնեց բոլորին՝ իրենց ներկայութեան համար: Ան խոստացաւ շարունակել այս մրցանակը յառաջիկայ տարիներուն ընթացքին՝ քաջալերելու համար թատերգութեան սեռին զարգացումը: Ան շնորհաւորեց մրցանակակիրները, ապա անոնց յանձնեց իրենց մրցանակները:

Մրցանակակիրները եւս շնորհակալական խօսքեր ուղղեցին Վերժին ձէրէճեանի եւ դատական կազմին՝ մաղթելով, որ սփիւռքահայ թատերգութիւնը դարձեալ զարգանայ եւ վերականգնի լիբանանեան բեմին վրայ, եւ ժողովուրդը քաջալերէ գայն:

«ԱԶԳԱԿ» Լիբանան

ԱՐԱՍ ՍԵՓԵԹՃԵԱՆԻ «ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՁ ԽՈՒՇԵՐ» ԳՐՔԻՆ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ ՐԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Ուրախութեամբ կարդացինք լիբանանահայ ծանօթ արձակագիր եւ խմբագիր Արամ Սեփեթճեանի վերջերս լոյս ընծայած «Ժամանակայոց Խոսեր» գրքին շնորհանդէսի մասին, որ տեղի ունեցած է




իր ծննդեան 70-ամեակին զուգարկապէս գրքին շնորհանդէսը նաեւ առիթ ծառայած է Հայաստանի Թէքէեան Մշակութային Միութեան արժանաւորապէս մեծարելու հեղինակը, շեշտը դնելով անոր անցեալի, գրական գործիչի, ինչպէս նաեւ հասարակական ծառայողի արժանիքներուն վրայ:

Այս կապակցութեամբ սրտի խօսքով հանդէս եկած են «Ազգ» օրաթերթի խմբագիր՝ Յակոբ Աւետիքեան, Լիբանանի դեսպան Կապրիէլ Ժանրան, բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկեան, Հայաստանի Գրողներու Միութեան նախագահ՝ Լեւոն Անանեան, հասարակագետ դոկտոր-փրոֆ. Կար-

լէն Դոլլաքեան, Հ.Բ.Ը.Մ.ի Հայաստանի գրասենեակի տնօրէն՝ Աշոտ Ղազարեան եւ ուրիշներ, գրականագէտ Սամուէլ Դանիէլեան, գրականագէտ Սուրէն Դանիէլեան եւ լրագրող՝ Մարկո Ղուկասեան:

Շնորհակալութեան խօսքով ելույթ ունեցած է մեծարեալ Արամ Սեփեթճեան:



**ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
ՀԱՅԿԱԶ
ՊԵՏՐՈՍԵԱՆԻ
«ԴԱՐՁԵԱԼ ՀՈՒՆՁՔ
ԵՒ ՅՈՅՍ»**

Ստամբուլու համար
դիմել հետեւեալ
գրախանութները
Կլէմտէլի մէջ
Ապրիլ՝ (818) 213-4112
Պերճ՝ (818) 244-3830

ՄԱՍԻՍ

ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

ԱՅԺՄԵԱԿԱՆ ՆԻԹԵՐ

Ո՞Ր ԿԸ ՔՇԷ ՄԵՋ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՅՈՍԱՆՔԸ

ՎԱՐԴԱՆ Ա. ՔՇՆՅ. ՏԻԻԼ ԿԷՐԵԱՆ

Չենք կրնար նախատեսել, ո՞րքան պիտի տեւէ մեր կեանքին մնացորդը: Ինչ որ գիտենք, մեր սպառած ուրախ ու տխուր տարիներն են, որ չուած են անվերադարձ՝ ակնթարթի արագութեամբ:

Հիմա հաստատ մեր ձեռքին մէջ ունինք վաղանցուկ այսօրը, պարտաւոր ենք իր մէջ մի ընդհանուր օգտագործել մեր անցեալի սխալներէն ու մեղքերէն խրատուած՝ շիտակ ու ճիշտ ուղղութիւն տալով մեր կենաց ճանապարհին:

Վստահ չենք, թէ իր տեւողութիւնը ո՞րքան երկար ու կարճ պիտի տեւէ: Ապահով պիտի կապուի՞ իր յաջորդին, կամ դժբախտ անակնկալի մը ընդմիջումով անհետ պիտի կորսուի, առանց վաղուան օրը ողջունելու:

Այս ալ լուրջ մտահոգութիւն մըն է, որ մեր ապագա նկրդարձնէ առաւել խնդրական եւ անստոյգ:

Մարդիկ, որ կեանքը կ'ապրին չափաւոր եւ բնականոն, չեն ուզեր, որ շուտով սպառին իրենց գարունամեայ տարիները: Մինչեւ անգամ անոնք որ ժամանակի մաշումին են թարկուած են իրենց կարողութիւնները եւ երկար տասմանեակներու ճնշումը կը կրեն իրենց ուսերուն վրայ, չեն քողարկեր ապրելու իրենց բուռն բաղձան քը: Հակառակ որ որոշ կը տեսնեն մայրամուտի ստուերներուն մէջէն մահուան մերձաւորութիւնը:

Յստակ է, որ ոչ մէկ մարդու մէջ չի տկարանար երկար ապրելու յամառ ցանկութիւնը, որքան ալ

ալեւորութեան տկարութիւնները խորախոց ցաւերու մէջ հիւծեն մարմինը:

Բնական է, որ երկիր ժամանողը կ'ուզէ երկար ապրիլ ու անժամանակ չմահանալ: Կը ջանայ ի գին ամէն գոհողութեան չիզուիլ կեանքէն, որքան ալ հիւանդութիւնները անյոյս ու անխուսափելի դարձնեն իր վախճանը:

Այս անձկալի հնչուածքները, մեղուներու պէս յարաժամ կը բզզան մեր մտքի տարածքին, մանաւանդ ալեւորած ու հիւանդ օրերուն, երբ մահը կը հնչեցնէ իր խժալուր անզգանգը օրուան բոլոր ժամերուն:

Հոգեկան այս խռովայոյց վիճակը կը յարատեւ մինչեւ մահ, առանց ընդհատումի եւ առանց փոփոխութեան:

Եթէ լրջօրէն նկատի առն ենք այսօրը, որ որքան շուտ անցաւ, կրնամ ըսել, թէ ապագան որքան ալ հեռու ըլլայ ներկայէն, մեզ պիտի չյուսադրէ, որ կեանքը երկար ու ապահով պիտի ապրինք:

Ժամանակի երազավազ հոլովոյթին մէջ, մեր կեանքը կը նմանի ալետատան նաւակի մը, որ նախասահմանուած է, մեր կարծածէն շատ աւելի առաջ մահուան խարակին բախիլ ու փշրուիլ:

Բայց կրնանք Աստուածահաճոյ ուղղութիւն տալ մեր ճակատագրի նախասահմանումին եւ ազատագրել մեր միտքն ու հոգին մղձաւանջային անձկութիւններէ, եթէ հրաժարինք մեր մարմնին յարաժամ պահանջներէն եւ ապրինք Աստուծոյ ուզած կեանքը,

չափաւոր կերուխումով եւ ժուժկալ հաճոյքներով:

Մարդկային ամէն շարժում ու ցանկութիւն, որ Աստուծոյ Սիրոյ Օրէնքին կը հակասէ, շուտափոյթ կը մօտեցնէ մարդը մահացու տկարութիւններով իր վախճանին:

Իմ Բժշկապետս, իմ Յաւիտեանական Հայրս է, Որմէ անբաժ ան կ'ապրիմ օրուան բոլոր ժամերուն, մահաձուլուած իր անհուն Հոգիին հետ:

Ես տգէտ մէկը չեմ, որ կը հաւատամ, որեւէ իմաստուն մարդու հաւատար: Բանիմաց ու ողջամիտ եմ եւ կրնամ խորանալ հաւատքով՝ բնագանցական ճշմարտութիւններու մէջ եւ տեսնել ամէն գերբնական իրողութեան մէջ Արարչին ամենագոր առկայութիւնը:

Այս գարմանահրաշ տիեզերքը՝ բազմաճառագայթ Տէր մը ունի, որ անվրէպ ու ներդաշնակ կը կառավարէ տիեզերքին ու մարդկութեան ճակատագիրը:

Չէի կրնար մարմնոյս մէկ մատը շարժել, եթէ Աստուծոյ կամքը չգործէ:

Ինծի համար, որ տարիքիս լիութեան մէջ կը շնչեմ, երկնային դրախտը եւ անմահութիւնը երկրէն կը սկսին:

Մարդ՝ որ աստիճան հաշմած պէտք է ըլլայ բանականութեամբ, որ տիեզերքի գարմանահրաշ ստեղծագործութիւններուն եւ անբաւ բարիքներուն մէջ չնկատէ Աստուծոյ առկայութիւնը եւ ապրի իրեն շնորհուած անփոխարինելի կեանքը մսխումներու ցոփութեան մէջ:

Եթէ կ'զուէք գիտնալ, թէ ո՞վ է ապերախտութեան մէջ ախոյանացած մարդը մարդկային հասարակութեան մէջ, որ իր ապրած գազրելի կեանքով կը ժխտէ Տիե-

զերակալին գոյութիւնը, իր մօրը արգանդէն վիժած՝ մարդակերպ ճիւղն է, անկրօն ու բարբարոս:

Անոնք, որ երկրի նիւթական բարիքներուն անյազուրդ ըմբռնունմը անիրաւ շահերու ետեւէն կը վազեն, ոչ մէկ օր չեն յաջողած նուաճել երջանկութիւնը, տառապած են սատանայի դրամանիշին սովամահութեամբ:

Կեանքիս աւարտին հասած՝ դեռ կը շնչեմ ալեւորութեան շողերուն մէջ, կենսառողջ եւ կը սպասեմ երջանիկ սպասումով Աստուծոյ օրհնաբեր հրաւերին:

Չեմ մտածեր, թէ ո՞ւր կ'երթամ, դէպի անմահութիւն կամ դէպի անգոյութիւն, թողած այս ճակատագրական հարցին որոշումը աստուածային տնօրինութեան:

Միայն շնորհապարտ զգացումով փառք կու տամ Յաւիտեանական Հօրս, որ ապահով երկարեց կեանքս մինչեւ խորագոյն ծերութիւն, որ ժայռանիստ հաւատքով ողջունեմ վախճանս:

Բոլորովին տարբեր պիտի ըլլայ ու միւթարական ճակատագիրը այն մարդուն, եթէ ապրի այս անցողական կեանքը Աստուծոյ սիրոյ օրէնքին համաձայն եւ ամէն իրողութիւն դիտէ բնագանցական ճշմարտութիւններու պրիսմակէն:

Որքան հաճելի է կազուրիչ օդով շրջապտոյտ մը բնութեան տեսարժան վայրերուն մէջ...: Բայց հոս եւս, երբ օրը կը տարածամի եւ արեւը կ'անհետանայ հորիզոնին ետեւ, ամէն շարժում կը դադրի եւ վաղանցուկ ժամանակը կ'ըսէ,

- Մինչեւ հոս եւ ոչ ասկէ անդին...:

Շաբ.ը էջ 18



WAHIB'S MIDDLE EAST RESTAURANT
"Where the East Meets the West"

MEDITERRANEAN - LEBANESE FOOD

BANQUET HALL

CATERING FOR ALL OCCASIONS

FAMILY ENTERTAINMENT

EVERY FRIDAY & SATURDAY NIGHT INTERNATIONAL & ARABIC SHOW




NAZO, VARTAN, AMIR & SINGER MUHAMMAD

CALL FOR RESERVATIONS
TEL 626-281-1006 626-587-1048
FAX 626-281-3641

910 E. MAIN ALHAMBRA, CA



BELLY DANCING

PHOTO/CONCEPT-J/D-2005 TEL (626) 795-4493

ԴԵՊՈՒ ԿԱՐՕՏԻ ՃԱՄԲԱՆԵՐ ... ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Շարունակուած էջ 16-էն

էջմիածին քաղաքի մուտքին գերեզմանատուն՝ տունը յաւերժական ննջեցեալներէ: Ընդարձակուել է այն, ափսոս: Ցանկապատի անցքից ներս ենք մտնում, քարացած ժպիտներէ տխուր դէմքերով անցորդներին են նայում յաւերժութիւն վաստակած մարդիկ: Մի փոքրիկ եռանկիւնի հողակտոր, որտեղ իրար գրկած հանգչում են հայրս, մայրիկս, հօրաքոյրս, եղբայրս: Խոնարհուեցի նրանց աճիւններին, նրանց բարութեանը, որ լոյս են վառել իմ սրտում: Գնացի, վազեցի դէպի իմ մանկութիւն, կարծես նորէն նրանց գրկերում էի, դէմքս այրուեց նրանց համբոյրների յուշերից: Կրակ վառեցի, խունկ վառեցի, որ իմ երախտիքի աղօթքի մըմունջը, բազմած ծուխի սիւններին, համար յաւերժութեան մեկնած նրանց հոգիներին: Իրենց լեռների լանջերից հայրենի աշխարհ բերեցի նրանց, հիմա նրանք հանգիստ ննջում են նրա հողում, իսկ ես որտեղ պիտի ննջեմ...:

Նախկինում կոլխոզ շուկայ էինք ասում, հիմա պարզապէս շուկայ: Գնացի էջմիածնի շուկայ, աշնանալին շուկայ, չիշում ես արդեօք քու ոստանների շուկաները: Գարնան հէքիաթային շունչը, ամրան արեւը, աշնան ծիածանն էր իջել շուկայ: Նրա կարմիր շինութեան, նրա բակի վաճառասեղանների շուրջը, հարիւրաւոր մեթրեր հեռու ճանապարհների, մայթերի վրայ կողովներով, արկղերով, տոպրակներով միրգ ու բանջարեղէն: Երկնքում վառուղ կամարակապ ծիածանի գոյները խլած՝ տանձ, դեղձ, սալոր, խնձոր, սաթեայ ու արիւնտո խաղող, փարաւոնների բուրգերի նման բլրացած ձմերուկ, ժպտում են, հրապուրում որ շոյեց նրանց ժպիտը, տանես տուն քու սեղանին, յագենաս նրանց արեւային բոյրով, հայոց հողի համով:

Առատ է ամէն ինչ, հաւատացէք շատ աւելի առատ քան այստեղի խանութներում: Այնտեղ վաճառում են հազար գրամ չափի միաւորով, այստեղ չորս հարիւր յիսունով, լցնում ես ահագին որ կշիւքների թաթերը նստեն, իսկ գները երեւի չորս-հինգ անգամ աւելի նուազ: Զարմանում էի թէ ինչու հայ հողագործի աշխատանքը այսքան էժան է, նայում էի նրանց արեւախանձ դէմքերին, տխրում էի: Այդ դրամով շատ բան չպիտի կարողանային գնել մենաշնորհեալ տէրերի խանութներից, որոնք պարենային ու արդիւնաբերական ապրանքների մենաշնորհեալ գներ են սահմանում: Նրանց ո՞վ է գէնք տուել, որ ջնջեն սահմաններ, հայոց քաջերը չեն նրանք:

էջմիածին-Վաղարշապատից գնում ենք... Արմաւիր քաղաք: Հայերը իրենց քաղաքներ ու շէներ են բերել իրենց արքաներին, հերոսներին, նախարարական տոհմերին, պատմիչներին, մատենագիրներին: Հայոց պատմութեան հայր՝ Մովսէս Խորենացին վկայել է, որ Հայկ Նահապետի թոռ՝ հայոց Արամայիս թագաւորը, Երասխի ափին կառուցել է Արմաւիր քաղաքը, նոյն ինքը «Արմա»ի, այսինքն աստուծոյ որդու կառոյց, որի քարերի վրայի արձանագրութիւնները պատմիչները ասորական սեպագրերի գաղտնագրեծ լեզուով ընթերցել էին՝ որպէս Արգիշտիի լինի: Մեր թուարկութիւնից առաջ չորրորդ դարի վերջում Արմաւիրը եղել է Երուսա-

ղունիների Արարատեան Հայկական թագաւորութեան մայրաքաղաքը: Արտաշէս առաջինը հիմնադրելով Մեծ Հայքի թագաւորութիւնը, Արմաւիրը դարձրել է նրա մայրաքաղաքը: Ինքնաշարժը հեզասահ սուրում էր խճուղիով դէպի Արարատեան դաշտի հիւսիսային շրջանը: Արարատեան դաշտը, Շիրակի դաշտը շտեմարանն են քարացած սահմաններով հայոց աշխարհի: Հայեացքս աջ ու ահեակ, նայում են ակօսուած դաշտերին, աշուն է, սակայն թփերը դեռ շալակել են բարիք եւ օտարականը այս ճամբեքից անցնելիս չպիտի՞ ասէր արդեօք որ «Այստեղից հայեր են անցել»: Իրարից մի քանի հարիւր մեթրեր հեռաւորութեամբ ճամբեգրի «շուկաներ», հողագործները դաշտերից

միրգն ու բանջարեղէնը դուրս են բերել վաճառելու: Այնքան առատ է բերքը, ինչպէս են այն կարողանալու իրացել: Երեւի դեռեւս գիւղատնտեսական մթերքների վերամշակման բաւարար ընկերութիւններ չեն գործում երկրում, որպէսզի կարողանան հողագործների արարած բարիքը լրիւ մթերել: Ափսոս է հողագործի բարիքը փճանայ, աւելի բարիք տեղծելու համար անհրաժեշտ է նրան խրախուսել՝ այսինքն պարզապէս պայմաններ ստեղծել իւրացնելու նրա արտադրանքը: Ասում էին, որ արգիւլել էին հողագործին այս տարուայ ծիրանի առատ բերքը արտահանել: Գիւղատնտեսութեան նախարարութեան պաշտօնատարներ ու իշխանութեան մենաշնորհեալներ այն ցածր գներով մթերել ու իրենց միջոցով արտահանել էին: Արդեօք այդ է հողագործին աջակցելու ճանապարհը: Ծամբեգրի շուկաներից գնում-


ներ էինք կատարում, ինդրում էի ուղեկիցիս չսակարկել՝ վճարել այն ինչ հողագործն էր առաջարկում: Գնում էինք, աւելի տեսանելի էին լինում Հիւլէակայանի երեք հսկայ «ծխնելոյցները»: Հայր այստեղ ճեղքում է հիւլէն, որից պոռթկացած կենսուժը ելեկտրականութիւն դառնում եւ հոսելով հայոց օճախներ՝ լոյս, լոյսեր վառում այստեղ: Ծանապարհի ձախ կողմում քարաշէն բարձր պարիսպ է, որի թիկունքից ծառերը իրենց թեւերը երկարել էին դէպի երկինք՝ լոյս աղաչելու: Ուղեկիցս ասում էր, որ այդ պարիսպը շրջապատում է նաեւ «Այդր Լիճը» այսինքն Ակնայ լիճը եւ ինչ... այդ ամբողջը սեփականութիւնն է մի մենաշնորհեալի, ինչ իրաւունքով են տիրացել հայոց դաշտերին, լճերին, քաղաքներին, ով է այն տուել...:

(Շարունակելի 1)

Jansezian Law Firm, PC

A Professional Law Corporation


Common Sense
and
Cost-Efficient
Solutions
to All Your
Legal Issues



Nazareth V. Jansezian, Principal Counselor

Business Law • Personal Injury

Family Law • Civil Litigation



6500 Wilshire Blvd., 5th North Central Avenue,
Seventeenth Floor, Glendale, California 91201

Telephone (818) 649-8828
Facsimile (818) 649-8289
info@jansezian.com
www.jansezian.com

Initial Consultation Free at Our Office
Ample Valetted Parking Available

ՓՐՈՖԵՍՈՐ ՕՏԱՆ (ՎԱՇԱՆ) ՎԱՐՂԱՆԵԱՆ (ՄԱՆՈՒԱՆ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԹԻ)

Մէկ տարի անցաւ այն օրից, երբ Սթոքհոլմ քաղաքում (Շուէտ) իր մահկանացուն կնքեց իրանահայ անուանի վիրաբույժ (ուրոլոգ) օրինակելի եւ հայրենասէր հայորդի փրոֆէսոր Օտան (Վահան) Վարդանեանը:



Թիւններ է կատարում տուժածներին:

Ծնունդ էր 1939 թուին Նոր Զուղայում: Տարրական եւ միջնակարգ կրթութիւնը ստանում է իր ծննդավայրում: 1960 թուին մեկնում է Մայր Հայրենիք եւ ընդունւում է Երեւանի բժշկական համալսարանը, որն աւարտելով դառնում է բժիշկ-վիրաբույժ: 1970 թուին մեկնում է Մոսկովա, կատարելագործելու համար իր մասնագիտութիւնը, ուր եւ արժանանում է փրոֆէսորի բարձր կոչման: Այնուհետ Փրոֆ. Վարդանեանը հաստատւում է Սթոքհոլմ:

Փրոֆ. Օտան Վարդանեանը 1991 թուին դարձեալ իր ընկերներով մեկնում է Արցախ եւ նուիրում է վիրաւոր ազատամարտիկների բուժման գործին: Այդ օգնութիւններին համընթաց նա Հայաստանի եւ Արցախի մի քանի հիւանդանոցներում տեղադրում է բուժման նորանոր եւ արդիական սարքաւորումներ: Նուիրեալ եւ հայրենասէր բժիշկը ամիսներ ծառայում է անկողնուն եւ մահանում է 2005 թուին Փետրուար 1-ին: Բժշկական բազում պեղումներ եւ գիտեր մնացին անաւարտ: Յարգանք իր վաստակին եւ չիշատակին:

Ն.

Այդտեղ նա հիմնում է իր սեփական բուժարանը եւ սիրով օգնում եւ օժանդակում է իրեն դիմող կարիքաւոր հիւանդներին: Հետագոտութիւններ է կատարում հաշմանդամներին բուժման համար եւ մեծ յաջողութիւնների է հասնում այդ կապակցութեամբ:

Հայաստանում 1988 թուին տեղի ունեցած ահաւոր երկրաշարժից անմիջապէս չետոյ, իր 30 ընկերներով եւ բազում դեղորայքով մեկնում է աղէտի գոտի եւ մեծ օգնու-

ԼԻՔԱՆԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԴՊՐՈՅՈՑ

Շարունակուած էջ 15-էն

Օր. Բերսաբէն՝ ամուսնացեալ անունով Նորընծայեան: Չհրատարկուեցաւ ծրագրուած այդ գիրքը, չեմ գիտեր ինչ նկատումներով, բայց չվերադարձուեցան նաեւ այդ հազուագիւտ նկարը:

Քանի մը տարի առաջ, Պէյրութ այցելութեան մը ընթացքին, Ս. Վարդան եկեղեցուց քահանան գիւ ուզեց տեսնել: Ինչպէս կուհեր էի՝ նոյն նիւթին մասին էր: Տուած տեղեկութիւններն ու բացատրութիւններն անհաճոյ վիճակի մը կը մատնէին ինձ քահանան, որ կամակատար մըն էր միայն, ամրապնդելով այն համոզումն, որ վարժարանին այսօրուան տէրերը չեն փափաքիր պաշտօնապէս հրապարակել Նուպարեան վարժարանին հիմնումին ու հիմնադրիներուն իսկական պատմութիւնը:

Մինչդեռ լայն մտածող մարդիկ պէտք էր վախնային իրականութենէն, որ կը հաստատէ թէ այսօրուան իշխանութիւնները չէին

հիմնադիրները Լիբանանի առաջին հայ դպրոցին եւ ընդհանրապէս գրեթէ բոլոր լիբանանահայ դպրոցներուն, որոնց տիրացած են ներկայիս:

Կ'ենթադրեմ թէ ժամանակակից այդ սերունդի ժառանգորդներէն ոմանք տակաւին կ'ապրին ու կը չիշեն՝ հաստատելու համար վերոյիշեալ տեղեկութիւնները:

Պատմութիւնը եղածին արձանագրութիւնն է միայն, եւ ըստ մեր ցանկութիւններուն ու նկատառումներուն զայն վերափոխել ու խեղաթիւրել փորձելը զոր խարդախութիւն է, որ չի դիմանար ճշմարտութեան լոյսին:

Լիբանանի ազգային իշխանութիւնները եւ ընդհանրապէս բոլոր դեկավար մարմինները այս ոգիով է որ պէտք է մօտենան պատմական իրականութեանց, ճանչնան ու խորացնեն զանոնք իբրեւ հայութեան կողմէ կատարուած վերականգնումի գովելի աշխատանք, որ անուրանալիօրէն լիբանանահայութեան պատմութեան մաս կը կազմէ:

ՈՒՐ ԿՐ ՔՇԷ ՄԵՋ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՅՈՍԱՆՔԸ

Շարունակուած էջ 14-էն

Ժամանակի անկասելի հոսանքը կը քաշէ իր ետեւէն կեանքին նաւակը եւ աւելի ժամանակ չի տար լիութեամբ ըմբռնելու երկրային բարիքները:

Կ'ըսէ մեզի լուռ ազդարարութեամբ...:

- Երախայ էիր, դարձար մանուկ, եղար պատանի, ապա չափահաս, անցար քառասունը, հասար վաթսուսի սեմին, հիմա՝ աւելի արագ կը քալես դէպի ութսուն եւ հաւանաբար դէպի դարամերձ հարիւր...:

Ժամանակը կ'անցնի ըոպէական արագութեամբ, ծանրացնելով մեր փոսացած ուները ապրուած տարիներու բեռով եւ անցեալին կը յանձնէ մեր կեանքին պատիկ պատմութիւնը իր յուսախաբութիւններով եւ ուրախութիւններով:

Սիրելի հայորդի, քու կեանքդ ալ տարբեր պիտի չ'ըլլայ եղբորդ կեանքէն, առաւել կամ նուազ յաջողութիւններով:

Երիտասարդութիւնդ երաշխիք մը չէ, որ դուն պիտի ալեւորիս ու երկար պիտի ապրիս:

Չենք կրնար նախատեսել վտանգը եւ մահը, որ ստուերներու նման, ամէն ըոպէ մեր քայլերուն կը հետեւին:

Որքան որ մեր մարմինը ենթակայ է ժամանակի մաշումի ճշունմներուն, միւս կողմէ հոգին ալ, որ նիւթ չէ, կրնայ դուրս գալ երկրի կապանքներէն եւ գերբնական ոլորտներու մէջ գտնել իր խաղաղաւէտ ազատութիւնը:

Պատանի նաւաստի մը, որ անվարժ էր ծովային ճամբորդութիւններու, նաւապետին հրահան-

գով, բարձրացաւ առագաստին կայմին ծայրամասը:

Ես՝ գիւղիս մէջ կը մագլցէի ամենաբարձր ծառերուն վրայ, ինծի համար շատ դիւրին է այս վերելքը, ըսաւ պատանին եւ արագօրէն հասաւ կայմին կատարը: Բայց երբ կայմին կատարը հասաւ, վերէն վար նայեցաւ, տեսաւ փրփրադէզ ալիքները եւ գլխու պտոյտ ունեցաւ, եւ սկսաւ բացականչել ու դողալ:

- Մի նայիր վար, աչքերդ դարձուր դէպի երկինք, լսուեցաւ նաւապետին որոտալի կանչը: Պատանին հնազանդեցաւ եւ գտաւ իր հանդարտութիւնը:


Դուն ալ սիրելի հայորդի, միշտ վեր նայէ, Աստուած ուներուդ վրայ դրած է գլուխդ, որ աչքերդ երկինք բարձրացնես ու փառաւորես Փրկիչը:

Վարը՝ կ'ապրին սատանաներէն աւելի չար ու սոսկատեսիլ մարդակերպ գազաններ, որոնք քառսի ու փլատակի վերածած են երկիրը, Աստուծոյ տեղածած տեսարժան վայրերով եւ իր բարոյագուրկ կլիման դարձուցած են անշնչելի:

Որքան, որ այս գրութեան մէջ, տիեզերական իրողութիւններու մասին արտայայտած գաղափարներս հայեցողական բնոյթ ունի, ես կը հաւատամ, որ մահէս ետք, հոգիս կը վերապրի ու կը հաղորդակցի ուրիշ հոգիներու հետ:

Համոզուած կը մեկնիմ երկրէն երկինք՝ դէպի նոր աշխարհ վերապրելու հոգեւորապէս եւ ոչ թէ կերուխումով նիւթական կեանք մը, ինչպէս կրօնամոլ քարոզիչներ կը հաւատացնեն ու կ'ոգեւորեն իրենց միամիտ հետեւորդները:

Ձեր Ծանուցումները վստահեցէք «Մասիս» շաբաթաթերթին



ԱՊԱՔԻՆՄԱՆ ՄԱՂՁԱՆՔ

Փաստինայի եւ շրջակայքի հոգեւոր հովիւ եւ «Մասիս»ի ներհուն աշխատակից՝ Արժ. Դոկտ. Տէր Զաւէն Աւագ Քհնյ. Արզումանեան վերջերս ենթարկուած է սրտի վիրաբուժական յաջող գործողութեան մը:

Շուտափոյթ եւ կատարեալ առողջութիւն կը մաղթենք յարգարժան հոգեւորականին:

ԺՈՂՈՎՆԵՐՈՒ ԸՐԱԿԵՐ

Ս.Դ.Հ.Կ. Փարամագ մասնաճիւղի անդամական ժողովը տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 24 Փետրուար, 2006, Երեկոյեան ժամը 8:30ին, Փաստինայի հաւաքատեղին:

Ս.Դ.Հ.Կ. Սեդրակ Շահէն Մասնաճիւղի անդամական ժողովը տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 24 Փետրուար, 2006, Երեկոյեան ժամը 8:30ին, Թահանկայի հաւաքատեղին:

Ս.Դ.Հ.Կ. Արսէն Կիտուր Մասնաճիւղի անդամական ժողովը տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 24 Փետրուար, 2006, Երեկոյեան ժամը 8:30ին, Կլէնտէյլի հաւաքատեղին:

ՅՈՒՇԵՐ ԵԱՖՅԱ ԲԱՂԱՔԻՑ

Մարտնակուած էջ 15-էն

շատ լաւ գիտէր Յակոբեւ Յասմիկի մտերմութիւնը, առաջուայ պէս Յակոբը նոյն Յակոբը չէր: Նախ Յակոբը շատ ծանրաբեռնուած էր դասերով, քանի որ վերջին դասարանի աւարտականի դասերն էր պարապում եւ ուզում էր գերազանց աւարտականով աւարտել բարձրագոյն դպրոցը: Բայց միւս կողմից Յասմիկը շատ էր խանգարում Յակոբին, թէ հոգեկան եւ թէ ֆիզիքական: Ես էլ տեսնելով եւ լսելով այս բոլոր պատմութիւնը, Յակոբենց տունը առաջուայ պէս չեմ գնում եւ ընկերութիւն չեմ անում, քանի որ Յակոբի ընկերները արաբներ էին, իսկ նրանց ծնողները հարուստ ցիտրուսային պլանտացիաներ ունէին:

Այդ տարիներին ներգաղթի շրջաններ առաջ եկաւ, մարդիկ ցուցակագրուում էին, տիկին Գոհարը շատ էր ուզում գնար հերթագրուել ներգաղթելու Հայաստան, նախ տղային խոստանում էին փայլուն ապագայ Հայաստանում, քանի որ լաւ էր սովորում, ինչպէս էր, իսկ երկրորդ կ'ազատուէր ներքին ըսի ըսաւ խօսքերից:

Բայց տիկին Յասմիկը միշտ հակառակ էր այդ քայլին եւ չէր ուզում որ տիկին Գոհարը կամ Յակոբը գնան Հայաստան: Մի գուցէ գիտէին Հայաստանի վճակը, կամ ուրիշ անհատական պատճառներ...:

Տիկին Գոհարը մինչեւ ներգաղթի ցուցակագրուելը, շատ էր մտահոգուում տղայի մասին եւ աւելի կարճ ճանապարհ գտաւ: Այն տնից որտեղ ապրում էին, դուրս եկան եւ գնացին էլ աւելի հեռու, ուրիշ թաղամասում ապրելու: Եւ այսպէս մենք Յակոբը եւ տիկին Գոհարի հետ բաժանուեցինք: Անցան տարիներ, ներգաղթի օրը Հայֆա քաղաքի նաւահանգստում, Յակոբի հետ հանդիպեցի շրջապատուած էր արաբ ընկերներով, բոլորն էլ կոկիկ անգլուական տղաներ էին, վերջում իմացայ մի քանիսը պետական պաշտօնների վրայ աշխատողներ էին, եւ ահա նրանց օգնութեամբ (ֆինանսական տեսակէտով) Յակոբը հեռակայ ընդունուելու էր Լոնտոնի համալսարանը: Հրաժեշտի ժամը մօտենում է կառամատուցում գտնուող ընկերները հերթով գրկախառնուում եւ առանձին առանձին բարի մաղթանքներ էին ցանկանում Յակոբին, այդ հրաժեշտի ժամանակ ամբողջ ժողովուրդը զարմանում էին թէ գնացողը հայ է, իսկ ընկերները արաբներ, բոլորի աչքերը թրջուած: Մենք էլ նաւի տախտակամածից տեսնում էինք այդ բոլորը եւ ձեռքի շարժումներով ցտեսութիւն ասելու ձեւով բաժանուեցինք մեր սիրելի արաբ ժողովրդի գաւակներին եւ սիրում ենք մինչեւ այսօր:

Մեր ճանապարհորդութիւնը 10 օր տեւեց մինչ Պաթում հասնելը: Այդ ընթացքում մինչեւ Պաթում հասնելը, ամէն օր իրար հետ էինք խօսու Պաբեղայի տախտակամածի վրայ, եւ պատմում էին իրար երիտասարդական հետաքրքիր դրուագներ մեր առօրեայ կեանքից, երբ հերթը հասաւ Յասմիկին, Յակոբը մի պահ լրջացաւ: Ինչպէս գիտենք Յակոբը 22 տարեկան հասուն տղայ է արդէն, աշխատում է զինուորական քամփում որպէս գրասենեակի ծառայող շատ լաւ տիրապետում էր անգլերէն, արաբերէն եւ ֆրանսերէն լեզուներին, որի համար վարձատրուում էր բարձր աշխատավարձ: Իմ հարցին թէ Յակոբ դու Յասմիկին սիրո՞ւմ ես:

- Այդ էլ ոնց, ես Հայաստան չէի ուզում գնալ, արաբ ընկերներս գիտէին, բոլորը հարուստի տղաներ էին, ինչքան մօրս ուզեցին համոզել որ հրաժարուի Հայաստան գնալուց բայց չեղաւ, ես մօրս ցանկութեան համար եմ գնում եւ լաւ գիտեմ իմ ապագան շատ դժուար է լինելու: Բայց քանի որ խօսքը հասաւ իմ եւ Յասմիկի մասին, դու լաւ գիտես որ Յասմիկը ինձ համար շատ լաւութիւն արեց իմ վերջի ուսումնական գործերիս համար, ես շատ եմ սիրում Յասմիկին լայն հասկացողութեամբ նա էլ նոյնպէս ինձ է սիրում, ինչ ես կարծում վարդգէսը գլխի չէր ընկնում, բան չէր ասում իր կնոջը՝ Յասմիկին, մի քանի անգամ լսեցի իրար հետ շատ բարձր էին խօսում եւ առաջուայ պէս վարդգէսը մեր տուն չէր գալիս, ինչ որ է հիմա գնում ենք Հայաստան, ինչպէս պիտի լինի մեր բախտը, տայ Աստուած լաւ լինի:

Պաթումում յատուկ սենեակ կար, կարմիր անկիւն էին ասում, այնտեղից ժողովրդին բաժանում էին, առանձին շրջաններ, անկախ մեր կամքից, Յակոբենց հետ բոլորովին տարբեր ուղղութեամբ ընթացաւ մեր ճակատագիրը Հայաստանում: Այդ տարիներին Հայաստանում իրար գտնելը մեծ պատմութիւն էր, քանի որ հասցէն չգիտէինք: Տարիներ յետոյ դէպից դենից հարցնելով իրար գտանք: Չեմ յիշում որ թուականին մէկ գիշերուայ մէջ համատարած աքսոր ուղարկեցին որոշ հայրենադարձներին այդ ցուցակի մէջ են եղել Յակոբը եւ մայրը տիկին Գոհարը: Խրուհեւան մանոֆիստի շնորհիւ աքսորից 6 տարի յետոյ Յակոբը վերադարձաւ եւ մենք ինչ ինչ պատճառներով իրար հետ դարձեալ հանդիպեցինք: Խրուհեւանի տարիներին նամակագրութիւնը նորմալ վիճակ ունէր, Յակոբը թղթակցում էր Յասմիկի հետ, դէպից դենից իմացել էր որ պարոն վարդգէսը մահացել է արաբի եւ հրեայի պատերազմի ժամանակ: Իսկ Յասմիկը, Հայաստան ներգաղթելու թուականին, մեր գնալուց մի քանի ամիս յետոյ, ունեցել է տղայ գաւակ: Յակոբը շատ էր մտածում Յասմիկի մասին, եւ չէր իմանում ինչ անի, իմ իմացած աշխոյժ Յակոբը չէր, շատ փոխուած էր, երբ հարցրեցի մօրը տիկին Գոհարի մասին, Յակոբի աչքերը թրջուեցին եւ շատ յուզիչ տեսարան ունէր Յակոբի վիճակը: Այդ տարիներին երբ Սիպիւրից վերադարձաւ Յակոբը, անհամբեր սպասում էր Յասմիկին մուտքի վրիպա խորայն գնալու համար: Անկազմակերպ ներգաղթը ինչ չարիքներ բերեց մեր հայ ժողովրդի գլխին: Տիկին Գոհարի հայրենասիրութիւնը եւ մայրական գուրգուրանքը տարիներ շարունակ փայփայեց, քաղաքից քաղաք տեղափոխուեց իր որդու Յակոբի ապագայի համար գնաց Հայաստան եւ այնտեղից Սիպիւր, դիակը մնաց Սիպիւրում, իսկ Յակոբի փայլուն ապագան խաւարեց:

Երբակացեմ: Յակոբի հետ մեր վերջին հանդիպումը եղաւ 20 տարի առաջ Երեւանի օվիլում ընտանեօք ԱՄՆ մշտական վրիպա առնելու ժամանակ: Յակոբից մինչեւ այսօր լուր չունեմ: Արդեօ՞ք Յակոբը տեսաւ Յասմիկին, քանի որ շատ էր սիրում, արդեօ՞ք հասաւ մուրազին տեսաւ իր տղային որ տարիներ շարունակ կարօտով սպասում էր: Ահա մի կեանք ամբողջութեամբ շարժարանքով լեցուն:

ԼՂ ԸԱՐՅՈՎ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԲԱՐԴ Է

Մարտնակուած էջ 5-էն

լուծումը կարող է իրականութիւն դառնալ, պարզապէս չար կատակ են խաղացել ողջ միջազգային հանրութեան գլխին: Թե այդ կատակում որ կողմն ինչ չափով է դերակատարում ունեցել, դժուար է ասել, թէպետ պէտք է յիշել, որ Ատրպէյճանը այս նոյն ընթացքում յաճախ էր կոշտ յայտարարութիւններ անում, իսկ բանակցութիւնների «կուլիսներից» ստացուող տեղեկատուութեան համաձայն, այդ դիրքորոշումը ատր-

պէյճանական կողմը պահպանել է նաեւ փակ բանակցութիւնների ժամանակ: Սակայն կարեւոր չէ, թէ ով էր չար կատակի հեղինակը, կարեւորն այն է, որ այդ կատակն աւարտուեց Ռամբոյէում, եւ այսօր բոլորին հետաքրքրում է մի բան՝ ի՞նչ է սպասուում առջեւում: Ի դէպ, Ռամբոյէում Գոչարեան-Ալիեւ բանակցութիւնների տապալումից յետոյ մի շարք լրատուամիջոցներ յիշեցնում են Ռամբոյէում 1999թ. Կոստովոյի հարցով բանակցութիւնների եւ դրանց հետեւանքների մասին:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԿԱՐԳԻ ԵՐԱԺԻՇՏՆԵՐ

Մարտնակուած էջ 7-էն

րը, ուր ութեակը հարազատօրէն հաղորդեց հեղինակին մտորումները եւ ասորումները: «Scterzo»-ն երկին գագաթնակէտն է ամենաժողովրդականը: Նաեւ «Presto» վերջին շարժը կատարեցին անդիմադրելի հմայքով, թէքնիքական բարձր արուեստով:

Այս հրաշալի համոյթի արժէքներին են՝ կատարողական փայլուն վարպետութիւն, անկրկնելի ոճ եւ

գերազանց ճաշակ: Կատարեալ էր մեր վայելքը: Տիգրան Մանսուրեանի ներկայութիւնը համերգին փայլքը աւելցուց, ինչպէս ծափերով ողջունեցին զինքը եւ գործը: Յուզուած էր...:

Ներկաներն ալ յուզուած էին, մտածումներու մէջ էի: Ինչո՞ւ մեր արուեստագէտները բացակայ էին, աններելի անտարբերութիւն (բացառութիւնները չարգելի), մշակոյթ շատագովներ...:

Յիշեցէք յաջորդը Մարտ 19ին է:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՇՈՂԻ ԸԱՄԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹԵՐՈՒ ԸԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ԸՆՈԱԶԱՅՆԵԼ
(626) 797-7680 (626) 398-0506

HARUT DER-TAVITIAN
 License #0828270
 1807 W. Glenoaks Blvd., Suite 202
 Glendale, CA 91201
 Tel.: 818/502-3233
 Fax: 818/502-3244
 Pgr.: 818/608-9898
 info@excelhye.com
 www.excelhye.com

EXCEL
 HYE INSURANCE SERVICES
 AUTO • HOME • LIFE • HEALTH • DISABILITY • COMMERCIAL

Jessica Demirdjian
 REALTOR

Prudential

California Realty
 9878 Hibert Street
 San Diego, CA 92131
 Bus 858 653-6400 Fax 858 653-6440
 Cel! 619 846-7738 jessicad@prusd.com



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ
ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION
 100 ԱՄԵԱԿ
ՀՊԱՐՏԱԼԻ ԱՆՑԵԱԼ **CENTENNIAL YEAR** **ԼՈՒՍԱԾՈՂ ԱՊԱԳԱՑ**
PROUD PAST **1906 - 2006** **EXCITING FUTURE**



The AGBU Southern California District Committee and the USC Institute of Armenian Studies are co-sponsoring a Seminar on the occasion of AGBU's Centennial to address the needs and priorities of Armenia and its Diaspora, from the perspective of Armenian university students and young professionals. The Organizing Committee is soliciting your ideas on how AGBU can continue to maintain the vibrancy of our communities well into its second century of service to the Armenian people.

Date: Saturday, February 25, 2006, 10 am to 3 pm

Location: AGBU Pasadena Center, 2495 E. Mountain Street

Hosts: AGBU and the USC Institute for Armenian Studies

Lunch and refreshments will be served.

More information, including submission form, is on: www.linxlogic.com/agbu/

To request a form via e-mail or hardcopy, please contact: AGBU Pasadena Center, Mrs. Shake Toumayan at (626) 794-7942 or SToumayan@agbuca.org

All proposals are subject to advance review. Potential speakers are requested to submit a brief, one-page synopsis using the form posted on the website above.

Deadline for submissions: January 28, 2006

Kindly RSVP to Mrs. Shake Toumayan at the AGBU Pasadena Center: (626) 794-7942.

Centennial AGBU/USC Seminar Committee

Dr. Mihran Agbabian, Co-Chair (USC), Dr. Vahram Biricik, Co-Chair (AGBU), Prof. R. Hrair Dekmejian (USC), Mr. Vahe Imasdounian (AGBU SCDC Chairman), Mr. Hovig Antabian (AGBU), Mr. Eric Boyajian (AGBU/USC), Prof. Osheen Keshishian, Mr. Vahe Kuzoyan (USC ASA), Dr. Guiragos Minassian (AGBU), Ms. Cynthia Simonian (AGBU), Dr. Harout Yaghsejian (AGBU)

ՊԱՏՐԱՍՏՈՒԵՑԷՔ

Հ.Բ.Ը.ՄԻՈՒԹԵԱՆ ԱՐՏԱԽԱԶԴԻ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԻԻ

Ardavazt Theater presents "Un Fil A La Patte"

A comedy by French playwright George Feydeu

ԵԼՈՅԹՆԵՐՈՒՆ

Շաբաթ Փետրուար 25, Կիրակի Փետրուար 26 GALA
 Մարտ 4, 5 – 11, 12 – 18, 19 – 25, 26
 Ապրիլ 1, 2
 Հղիս 9, Orange County

ԾՈՐԾ ՖԷՅՏՕ « ՄԱՏԻ ՓԱԹԹՈՑ » ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

ԱԿՈՒՄԲԻ ՕՐ

Հ.Բ.Ը. Միութեան 2 ամիսներ է Վեր սկսած «Ակումբի Օր» ընտանեկան երեկոները կը շարունակուին մեծ խանդավառութեամբ փաստինայի Կեղրոնին մէջ, Ուրբաթ երեկոները: Թաշորդ ընտանեկան երեկոն տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 17 Փետրուար, երեկոյեան ժամը 7էն սկսեալ:

Փոքրիկներու մասնաւոր յայտագիր ժամը 7-ին Ընթրիք եւ այլազան խաղեր Զուարճալի ժամանց բոլորին Թաւելեալ տեղեկութեանց համար հեռ.աձայնել (626) 794-794

Հ.Բ.Ը.Մ ՀԱՅ ԿԻՆ

A.G.B.U HYE GEEN

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Հայ Կին Վարչութեան Գախաձեռնութեամբ



«Հոս Ամերիկա Է»

Ընտանեկան հարցերու վերաբերեալ սեմինար Ներկայացնող՝ Ծաթե Եկաեան, MFT



Ուրբաթ Փետրուար 10, 2006 Երեկոյան ժամը 6:30-7:30
 Ուրբաթ Փետրուար 24, 2006 Երեկոյան ժամը 6:30-7:30
 Ուրբաթ Մարտ 3, 2006 Երեկոյան ժամը 6:30-7:30
 Ուրբաթ Մարտ 17, 2006 Երեկոյան ժամը 6:30-7:30

ՀԲԸՄ Ալեք Մանուկեան Կեդրոնից մէջ
AGBU Alex Manoogian Center, 2495 East Mountain Street, Pasadena, CA 91104

Մանրամասնութեանց համար հեռ.աձայնել՝
 ՀԲԸՄ (626) 794-7942, Վրեժ (818) 416-1511, Լուսինէ (818) 687-5175